



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L. Uu qun pti / Juidi

2/4 4/4 up long huu Sump

u. 1931

891.99

u-16

Մ Ի Կ Տ Ո Ր Հ Ո Ղ Ի Հ Ա Մ Ա Ր

L. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ



891.99
U-16

25 .07. 2013

16 NOV 2011

827.99

U-16

vs

Լ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ

ՊԻԵՍ 3 ԳՈՐԾՈՂ.—ՅԵՐՐՈՐԴԸ՝ ՅԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐՈՎ

ՅԵՐԿՐՈՐԿ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱՆՍԻՍ

4030

38820



ՊԵՏՂՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հարուստ չե մեր գլուղական բեմը պիեսաներով: Մինչդեռ մեր տնտեսական և կուլտուրական վերելքը թատրոնն աչնպիսի պահանջ են դարձրել գլուղում, վոր այս դործի անուշադրութեան տալը վաչ մի արդարացում չի կարող գտնել: Գլուղական թատրոնի կարիքներին բավարարելու համար առաջին հերթին պիտի մատակարարել պիեսա: Պիեսաներ չկան: Պիեսաների կարիքը կա:

Գլուղի թատրոնը, ինչպես և քաղաքի թատրոնը մի նպատակ ունեն պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում, աչն և, զարկ տալ մեր մասսաների կազմակերպված արշավին սոցիալիզմի կառուցման, սոցիալիստական շինարարութեան ֆրոնտի աշխատանքներին՝ կուսակցութեան կողմից նշված ուղիներով:

Այս գերագույն նպատակին պիտի հետապնդի թե քաղաքի և թե գլուղի թատրոնը: Այս հիմնական գրույթն ևլ պետք և կազմի յերակետ պիեսաների հարցում: Առաջին քալերն, առաջին աշխատանքներն այս ուղղութեամբ մենք արդեն ունենք: Սակայն հենց այս առաջին քալերը և մասսաների աճող պահանջը դեռ իրար անհարիր են, աչն իմաստով, վոր գլուղի թատերագրութեանը հետ և մտում մասսաների պահանջից և վրասում մեր ընդհանուր քաղաքական-կուլտուրական աշխատանքներին:

Մեր գլուղին, մեր գլուղի թատրոններին, խրճիթ-ընթերցարանների թատերական բեմերին պիտի տալ պիեսաներ, վորոնք իրենց բովանդակութեամբ զուգորդվին այն քաղաքական-տնտեսական-կուլտուրական հարցերին, վոր առաջադրում և մեր կուսակցութեանը և իշխանութեանը դասակարգային կովի սրված ներկա պայմաններում սոցիալիզմի շինարարութեան աշխատանքների ֆրոնտում: Ներկա շրջանում գլուղի թատրոնի խնդիրները նույնն են, ինչ վոր առաջադրել և և առաջադրում և կուսակցութեանը գլուղի տնտեսութեան ղեկնաստրուկցիայի ասպարիզում և ինչ վոր նշված և արդեն մեր մեծ աշխատանքների պլանների մեջ: Թատրոնն իր բեմագրութեաններով պիտի դա, պիտի նպաստ-

Հրատ. № 1583

Փրատեպօր № 9321 Պատվեր № 1848 Տիրած 5000

Պետրոպոլի տպարան Յերևան,

տի մաստաների արագ բեկմանը դեպի սոցիալիստական շինարարու-
թյունը, եւ ավելի խիտ շարքերով ներգրավելով մասսաներին սո-
ցիալիզմի կառուցման գործում, նա պիտի գա, նպաստի մասսանե-
րի դաստիարակութեանը պրոլետարական խնտերնացիոնալիստա-
կան վոգով, կազմակերպի նրա շարքերը՝ ինչպես մեր բոլոր աշ-
խատանքները, այնպես եւ մեր ընթացիկ կամպանիաներն հաջող
և արագ կատարելու համար:

Մինչև այժմ մենք սպասում ենք կոլխոզային լավադուչն
պիեսային, մինչև այժմ չկա մի պիեսա, վոր իր հիմքում շոշափի
գյուղատնտեսական մեր աշխատանքներն իրենց ամբողջութեամբ,
իրենց հիմնական խնդիրներով դասակարգային կովի ֆոնի վրա:

Մեր գյուղթատերագրութեանը պետք է նվիրել առավել
ուշադրություն և պայմաններ ու հնարավորություններ տալ
գրելու, մշակելու, կազմելու գյուղի մեր բեմերի համար համա-
պատասխան պիեսաներ:

Մեր կյանքը, մեր շինարարությունը, մեր մտտիկ անցյալը—
1920 թ.—մայիսյան ապստամբությունը, քաղաքացիական կռիվ-
ները, մեր արդիական աշխատանքները գյուղի վերակառուցման
ասպարիզում առատ նյութ են տալիս գյուղթատերագրութեան հա-
մար: Իբրև որինակ առնենք Լենինականի շրջանի Քյավթառու
գյուղը 20 թ. մայիսին: Այն պատմական նյութերը և վավերա-
գրերը, վոր արդեն հրատարակված են թե առանձին և թե պարբե-
րականներում, բավական են, վոր հիմք ստանելով թեկուզ այս
ավյալները կազմել մի պիեսա գյուղի համար—նոյեմբերի 29-ի
հաղթական ապրիլից: Կամ թե ներկա շրջանի կոլեկտիվ տըն-
տեսությունների կազմակերպումը, նոր շարժումը, դասակարգա-
յին կռիվը, մեր գյուղի վերելքը սոցիալիստական շինարարու-
թյան բնագավառում և այլն: Ահա խնդիրներ և հարցեր, վորոնք
անշուշտ կարող են տալ առատ նյութ և հարուստ մատերիալ
գյուղթատերագրութեան համար, բայց այս թատերագրությունը
գեո տեղից չի շարժվում:

Ինչ խոսք, վոր այս թատերագրությունն իրոք իր տեղից
պիտի շարժվի և նա չի կարող չշարժվել, քանի վոր մասսաների
պահանջը յեկել և ձեռում է մեր թեկուզ սակավաթիվ գրամա-
տուրգների կարիներնորի դռները:

Հրատարակելով Լ. Սաղաթեյանի «Մի կտոր հողի համար»
պիեսը, պետք է ընդգծել, վոր անուշտ այս այն պիեսան չի, վորք
մապիև խոսում ենք. սակայն ճիշտ կարող է ժխտել, վոր մեր գյուղ-

մասսաների հենց դաստիարակութեան համար, նոր կյանքի, խոր-
հրդային կյանքի բեկումն եւ ավելի ուղեքի դարձնելու համար
կարևոր չէ բեմի վրա ցուցադրել այն կենցաղի այլանդակու-
թյունները, վոր իշխել է այստեղ տիրականորեն նախախորհրդա-
յին կյանքում: Յե՛վ ճիշտ կարող է ասել, վոր արդեն այս կենցաղը
բոլորովին անհետացել է և չկան մեր այժմյան գյուղերի ավելի
հետամնաց տեղեր, ուր դեռ իշխում են կենցաղի այն այլանդա-
կությունները, վոր այնքան տաղանդավոր կերպով նկարագրում
է շնորհալի գյուղագիր Լ. Սաղաթեյանը: Այս մասին կարելի չէ
կարգալ մեր ամենորջա թերթերում, այս մասին կարելի չէ հարց-
նել մեր ժողգատարաններին:

Յե՛վ ճիշտ կարող է պնդել, վոր թատերագրութեան, ինչպես և
առհասարակ գրականութեան նյութը կազմում է միմիայն արդիա-
կան կյանքը: Այդպիսի բան չկա: Հարցը վերաբերմունքի մեջ է,
հիմնականը նյութի լուսաբանութեան մեթոդն է, վոր կարևոր է:
Լ. Սաղաթեյանի «Մի կտոր հողի համար» այս պիեսան հիմնա-
կանում չի հակասում մեր խնդիրներին: Իրա մեջ և և պիեսայի
առավելությունները: Լ. Սաղաթեյանի այս պիեսայի արժանքները
զգալի չեն և ձևի կողմից: Հեղինակը իր տիպերը տալիս է կեն-
դանի կերպով, հատուկ կոլորիտով, տեղային ժանրով, աշխույժ,
դուսեղ, կենդանի ապրումներով, մի խոսքով՝ հենց ինչպես կա-
սեցին իրենք գյուղագիրները՝ համով-հոտով, առանց Ֆալսիֆի-
կացիայի:

Պիեսայի այս խոշոր արժանիքները աչքի չեն ընկնում հատ-
կապես գործողութեան սկզբի մասերում, իսկ հետագայում պիե-
սայի շեշտված գրամատիզմը հիմնական այս տոնը փոխում է:

Այնուամենայնիվ պիեսան, վորպես հին գյուղը պատկերող
մի եպիզոդի նկարագիր, մնում է իբրև արժեքավոր գործ, անկախ
իր մի շարք թերություններից:

Այս նպատակով եւ Լ. Սաղաթեյանի «Մի կտոր հողի հա-
մար» պիեսան լույս է ընծայվում մեր գյուղական բեմերի համար՝
իբրև հին կենցաղը հաջող դրսևորող պիեսա:

Այս պիեսան իր առաջին հրատարակութեան շրջանում
(1924 թ.), ժամանակին մեծ ազմուկ է հանել հատկապես մա-
մուլում և հանձնարարվել իբրև ինքնուրույն պիեսի հաջող փորձ:

Ա. Հ.

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

ՍՐՔՈ—պսակվողի հայրը	42	տարեկան
ՄԱՆՈՒԿ—նրա վորդին՝ փեսացուն	12	»
ՍԱՂԲԻ—Սրբոյի կինը	36	»
ԱՄԻ ԳԻՐՔՈՐ—Սրբոյի հորեղբայրը	70	»
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՅԻՉ	30	»
ԳՂԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ	40	»
ՄԵՂԻՏՈՆ—Քերոբի փեսայը	25	»
ԱՂՈ—հարսնացվի հայրը	45	»
ԱՂՄԱՍՏ—Ալոյի կինը	38	»
ՇՈՒՇԻԿ—Ալոյի աղջիկը, հարսնացուն	18	»
ԲԱՐԹՈ—Ալոյի տղան	23	»
ԽԱՉՈ—Սրբոյի ծառան	26	»
ՏԻԳՐԱՆ—Շուշիկի սիրահարը	25	»
ՎԱՐԴԱՆ—Տիգրանի ընկերը	26	»

Սաղանդարներ և բլուլի վրա նվագողներ:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սովորական գյուղական տուն՝ իր կանկարասիով. մեջ
 տեղը բուսին յերեմ կողմից խալիչաներ փռած: Մեհն,
 ապի Գիբորը նսած բուսու սակ, իսկ վարժապետը
 յերուզ կողմում՝ սարուեսկի վրա, խոսակցում են: Սալ-
 բին սան սի կողմում խնոցի յե հարում, սի քոլուհու հետ.
 մերք ընդ մերք մասնակցելով խոսակցությանը: Տան մի
 անկյունում կապած կա մի կամ մի քանի հորքեր, կամ
 գառներ, խոսք առաջներին: Քուսուց մի փոք հետո՝
 պատից կախված են մի գույզ սապուկներ, յերկազործա-
 կան գործիքներ, փոցիս, գեանդի յեմ ալն: Տան մի կող-
 մում դրված են դուքիկներ՝ փրան ծալք յեմ մի շարժ
 կապյա ամաններ: Մանուկը լավառ ու պանիւր է վերց-
 նում յեմ ուտելով՝ վեգ խաղում. ընկերոջը-յերբեմն հա-
 մեցե՞ է անում, յերբեմն ել նրա ուզելիս՝ մեծում:

Տ Ե Ս Ի Լ Ի

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ, ՍՐՔՈ, ՍԱՂԲ, ՎԱՐՃԱՊԵՏ, ՄԱՆՈՒԿ

ՍՐՔՈ. Ի՞նչ կուզեք տեսք, աղին վոր մարթ պատի-պատի
 չպսակի, ի՞նչ համ ու լազաթ ունի. վոր քորփա-քոր-
 փա դարդի տակ չքցի, մեկ լավ չխաշի, ել նրանից
 ի՞նչ դուրս կգա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ողորթ ա, ետենց ա. տեսեք, ես դուզ
 քսան տարի կլինի, վոր յես քո փողորմած հորից բա-
 ժանվել եմ: Իմ աղերք իմ հառեջ հըլա Իսուս-Քրիս-
 տոս չեն արե. իմ կողմանե, աստված են մարթի թող

տունը քանդա, վոր ընդոնց թուխուն քաշելուց բիւա
տեսել ա. իմ դեմ թամամ հարս են, ասեմ մեռեք՝
կրեռնեն, ապրեք՝ կապրեն...

ՄԱԼԻԻ. (Համեմատաբար ցածր ձայնով, բիրր ժածկելով):

Հալբաթ վոր ետենց ա. ուռենին վոր ուռենի ա, մին-
չի գալար չիինի, խո քթոց չեն կանա գործի, ետպես
ել իտանն ա:

ՄՐՔՈ. Տո ջանքմ, մեր սովորութենին սովորութեն կհաս-
նի, ախպեր ջան, դնա դախըցի, նոր պսակվի, նոր
տղեղ հըլնի, մեծանա, քեզի պախա. թափն թավնւ,
աչքս լուս...

ՄԱԼԻԻ. Ամի Գիրքորի ասածները ողորթ են, մարդ վոր
քառասուն տարեկան հասակին մե դուժին թոռ-մոռ
չունենա, ել ինչ... Չաթի հողին թող դուրս գա տղե-
քի, հարսների, թող աշխատեն, ծնող պահեն: Ախ,
թե իմ հառչինեկ տղեն սաղ կմնար, թոռ ել կունե-
նայի, ծոռ ել կունենայի... Ախ, ինչ ասեմ, գրողի
աչքերը քոռներ...

ՄՐՔՈ. Ետ քո ասածները գլուխ կգա են ժամանակ, վոր
մարթ վախտին պսակի...

ՄՄԻ ԳԻՐՔՈՐ. Համա Մանուկի լսվ լազաթին վախտն ա.
ել վոչ դես, վոչ դեն...

ՄԱԼԻԻ. Փառք ասածն, շատ ու քիչ գիր դալամ գինս.
իրա համար մի թեթե դուքան կբանա, լազաթին ա-
ուտուր կանա...

ՄՐՔՈ. Տո դուքանս վորն ա, բանս վորն ա, ըննչպարու-
թյունից ել լավ դախողով բան կա... Գեղի համար
ջանավար գութանը լծա, մե տասը որավար հող վա-
րի ու ուխտ լեքը ապրի... Կեր ել, խմի յեր, ել նոր
գես ու գեն ընգնիր ինչ ա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Տո ողորմի ձեր հորն, ետ ինչ ա գուք,
հալբաթ վոր ըննչպարությունը... հալա մեկ ել ասա

ըննչպարություն... մարդ վոր հողից չկշտանա, դուք
քարու-կշեռքից կկշտանա... փառք ասածու, ամենքա
ել լավ գինաք, վոր աշխարհիս վրա ինչքան իտան,
չին ու ջանավար կա, սաղ ել հողից կկշտանան...

ՄԱՆՈՒԿ. (Խոսակցության ժամանակ Մանուկը մի էիչ
հուրուց հետո՝ սակ անկյունում վեց է խաղում
ու հանախ լավում է՝ «Արի, կոճի ջան, արի» — կամ
րե չե — «Ետ չելավ, նորից քցի»):

ՎԱՐԺԱՊԵՏ. Այ գարմանալի բան, ձեր ասածները վոչ
միայն գարմացնում, այլ և վերին աստիճանի գայրաց-
նում են. խոսք չկա, իհարկե, չերբեմն ել սարսափեց-
նում... Այս ուղիղ լոթը ամիս է, վոր չես ձեր ողուհն
եմ ապրում, բնականաբար և բավականաչափ գաղա-
փար ունեմ ընդհանրապես ձեր ժողովրդի, մասնա-
վորապես ձեր ընտանիքի նիստ ու կացի և սովորու-
թյունների մասին... սակայն կայացրած վճիռներից
վատթարագույնը այսորվանն է... Տեսեք, չես քանի
անգամ առաջարկեցի, անգամ խնդրեցի մայրիկից,
թե Մանուկին տվեք՝ յես պատրաստեմ, տանք Գևոր-
դյան ձեմարան, կամ Յերևանի թեմական դպրոցը,
կամ մի այլ դպրոց... Իհարկե, չերեխան առողջ է,
կենսունակ, ընդունակ, ինչպես հատուկ է լեռնցի-
ների... բավականին բան կսովորեցնելի... մինչդեռ
իմ բոլոր ասածները մնացին «ձայն բառբառ անա-
պատի»: Հապա տեսեք, մի կտոր հողի համար ու-
ղում եք անբախտացնել ձեր անմեղ չերեխային...
Մարդկության լուսավորության այս պալծառ ժամե-
րին դուք կրկին ձեր հին եղն եք քշում, կարծելով,
թե այս սարերից դենը ել ուրիշ աշխարհ չկա, մենակ
դուք եք, ու դուք...

ՄԱԼԻԻ. Ա, հա, հա, յարաք, այ նաչար ջան, դու վոր ես
սարերից դենն ես գնացե հա, մի տենանք ինչ ես
զցել խախալի գլուխը... փառք ասածու, ետ յաշիտ

մի կնիկ ել չունես, վոր քեզ տերութիւն անի, յա
եւ հողիտ աալուց, մի բուռը սե հող քցի երեսիդ...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Մեղա քեզի, մեղա, առ անածակի վարժա-
պետ, դու յեքա Թիֆլիզա շերմարան ավարտուկ մարթ,
մազյար մինչի ետը չէս գինա, վոր սաղ սալամ աշ-
խարհը չէ վոր մի կտոր հողի համար հիրար կուտեն:

ՍՐԲՈ. Տո ամի ջան, ամի, մե են ողորմի քու անուշ հոր
հոգուն, հլա մե հարցրու, ասա տես եե, են յեքա
տերութիւնները չէ վոր մի կտոր հողի համար հա-
զարավոր մարթի արյուն են թափում:

ՎԱՐԺԱՊԵՏ. Հա, հա, քիչ մնաց ձեզ տանեք, տերութիւն-
ներին հավասարացնեք:

ՍՐԲՈ. Տո վարժապետ ջան, չեմ գինա, մեզի մարթատեղ
չէս դնում, թե գաթի չես հասկնում...

ՎԱՐԺԱՊԵՏ. Շատ լավ մարդատեղ եմ դնում...

ՍՐԲՈ. Յա անութեն, յա տերութեն, մեկ բան ա: Յապո-
ւի համար թանգ ա մե Մանջուր, բնձի հա-
մար ել մե Գոգալ-Դարի արա... Տո զուրբան
քեզի, ուռուս յապոնի կովին սալգաթ յեղել եմ, իրա
Մանջուրա մեջը սխտը հետ խշտկաբոյ եմ գնացե
մի կտոր հողի համար. ըտոնք ամենը յես լավ գինամ:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. (Փոքր ինչ գայրացած): Վարժապետ ջան,
եա մե կտոր հող վոր ասում ես հա, վոր դրուստը
հարցուս, հող շինող ես ձեռներս ա, ինչպես ասում
են՝ «Խաչին տերն ա զորավոր անողը»: Հողը վոր կա,
անասունի պես մի բան ա, նրան պտի ջան տաս,
սիրուն, լավ կշտացուս, վոր բանը բան նշանց տա...

ՍՐԲՈ. Դրուստ վոր, մինչ հողը շինում ես «մի կտոր հող»,
ջանդ ել ա մաշվում, կցանքդ ել հետը:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Վարժապետ ջան, վարժապետ, հիմա մեր
ահազին արտերի մեջ, վոր սխտն որ, սխտը գիշեր
ման գաս, դեզի համար մի քար չես քթնի. եա ա-
մենը ես ձեռներովս եմ արել ե. ալ, ալ տես, յա-

րար մե սաղլամ յեղունդ ունեմ... (Յույց ե սալիս
ձեռները): Ձե, վարժապետ ջան, իմալ տեսում եմ,
դու քաղքցի յես, եա բաներից ենքան ել գաս չես
հասկանում...

ՎԱՐԺԱՊԵՏ. Ձեր ասելով մի կտոր հողը, կամ ձեր մեկ
արար, քո Մանուկից թանգ ա:

ՍՐԲՈ. Հալբաթ վոր, հալալ քրտինքով սպրոզ մարթի արար
իրանից ել թանգ ա: Վարժապետ ջան, վոր լավ ի-
մանաս, Մանուկին Մանուկ դարձնողը—հենց եա մի
կտոր հողն ա, վոր կա:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Տո, ալ ջանըմ, ալ գյոզըմ, դու վոր կաս,
քեզի համար հով, սյարին սթաղների մեջ շոչըցած
մարթ ես, հալբաթ վոր ես թավուր բաներ քեզի հա-
մար խորթ կթվան...

ՍՐԲՈ. Համա, տունը մերը, խոսքը մերը, վարժապետ ջան,
դու քանի տարեկան ես:

ՎԱՐԺ. Յէս...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Համա դու, հրամանքդ:

ՎԱՐԺ. 30 տարեկան...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Տես հալա, դու 30 տարեկան մարթ, նոր
պտի պսակվես, նոր քո կնիկը տղա բերի, նոր քո տղեն
եւ շոչնա, քեզ քո ձեռության վախար պահա, թափու,
թափու:

ՍՐԲՈ. (Միջամտելով). Ամին դրուստ ա ասում, քո Մա-
յեր մեր գեղ հասուկ տղերք ունեն. ամեն մեկը մե
համփա տուն են պահում:

ՎԱՐԺ. Դուք կարծում եք, ամուսնութիւնը հեշտ բան է,
ինչ:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Պսակվելը, պսակվելուց ել հեշտ բան:
Վոր սուս չասեմ ե, մե ամսվա մեջ հազար տղա
կպսակեմ... Դու ծախսը, մըխսը տուր, տես, կպսա-
կեմ, թե չե...

ՎԱՐԺ. Ճշմարիտն ասացիր, մեկ ամսվա մեջ հազար տղա

կպսակես. յես դրանում համոզված եմ և բնավ չեմ կասկածում. բայց Մանուկի նման մանուկ պսակողները, իրանք մանուկից ել մանուկ են...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Տո ադա Սրբո, վոնց կերեա, մեր վարժապետը ետը թարս ա քնե. մե սհաթվա մեջ ամենիս շինեց Մանուկ. ետ անունը ինչքան դուր ա եկել մեր վարժապետին...

ՎԱՐՓ. Ե, մանուկ խոսքն ել չեք հասկանում...
ՍՐՔՈ. Հալլա, հալլա, մարթ ել իրան տղին չհասկնա, տո դու ետ ինչ ա կասես, վարժապետ ջան... չեմ գինա...

ՎԱՐՓ. Վոդորմելիներ, մանուկ յերեխա կնշանակե...
ՍՐՔՈ. (Տախացած): Բա Փիլիպոս ինչ կնշանակե:
ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Յես նոր գլխի ընգա. տո քաֆրի տղա, դու չեքա մհալի իշխան Սրբոյին յերեխա յես դարձնում:

ՎԱՐՓ. (Մի ֆիչ ալլալված). Միթե պարզ չե, ինչ...
ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Վալլա, քո պարզն ու ամբը յես չեմ հասկանում: Տո ադա Սրբո, դու բան կհասկնաս:

ՍՐՔՈ. Տո ամի ջան, մեր վարժապետը վտան գլուխ ամբ ա ու կա:
ՎԱՐՓ. Ախր սրտին դիպչելու բաներ եք անում ու ասում, բարեկամներ:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Տնավերներ, ինչ հելավ ձեզի, ետ թավուր խոսելով, քիչ մնաց աշխարհից դուրս դանք:
ՍՐՔՈ. Թամամ վոր ետենց ա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ողորմի են հորդ, վարժապետ, մե մեր լեզվով պարզ խոսա, վոր բան հասկնանք...

ՎԱՐՓ. Արտեղ պարզի, բարդի բան չկա: Բանը նրանումն ե, վոր դուք ձեր յերեխայի վերաբերյալ պատրաստվում եք ալնպիսի վճիռ արձակել, վորպիսին չեն արձակի, ամենածանր հանցանքի համար, վոչ դաշտալին և վոչ ել զինվորական ատյանները:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ատյանը վո՞րն ա:

ՎԱՐՓ. Այսինքն սուր:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Սո՞ւր...

ՎԱՐՓ. Այո, սուր...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. (Դիմում է Սեֆյին. Սալբուն): Տո, դուք ըլեք ձեր հոգին, դուք բան հասկացա՞ք...

ՍՐՔՈ. Հասկացածներս ել մոռացանք:

ՍՍԼԻՒ. (Հեզուանով): Զաթի շաա ուսում առուկ մարթիք մե թավուր են հըլնում... (Համոզված ձեով):

ՄԱՆՈՒԿ. (Խանգարում է խոսակցութունը լալազին բողոքելով): Չեմ, հը, Սարոն կոճիքս ստավ, չի սալիս, չեմ, հը...

ՍՐՔՈ. Շան լակոսներ, դուռ դնացեք, լսողացեք ելի, ինչ ըլավ ձեզ:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. (Դիմում է վարժապետին): Ախպեր ջան, մենք չե՞ դու, իմալ հասկնանք, ինչ վոր դուր ա, դուր, պտի ասեմ. մենք ըստեղ հարսանիքի ուրախության մասին ենք խոսում, իսկ դու առանց կովի ետ սուրբ գործը տարար, հասցրիք սղի դուներ. են ել վորը կհասկնա հանգի սուր, սարի սուր... ողորթ ա, մենք լսողաց ենք, մե հազար անգամ լսած կանք, վոր սարի թոփ ել կա, հանդի յել, համա իմ կողմանե թող խլանա են մարթի անգաճը, վոր լսած կա, թե ետ թավուր սղեր կան աշխարհիս մեջ: Ո՛ւր մնաց, վոր թամամ ոխար տարի սուղութիւն են արե մեր դատարանի մեջ:

ՍՐՔՈ. Ողորթ ա, ետմալ ա:

ՎԱՐՓ. Յես ավելին կասեմ. կասկածից դուրս ե մի բան, վոր դուք վճուր եք հավիտյան անբախտացնել, յեթե կուզեք իմանալ, ուղղակի սպանել ձեր յերեխային:

ՍՐՔՈ. Ա՛յ, հա՛յ, նալլաթ քեզի չար սատանա. ետ չուրդաքանդ վարժապետը ընձի վորթեսպան շինեց:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Մեղա ըեզի, տեսեք ե՛, աշխարքիս բանն
ե՛: Մեկը չկա ասի, տո խեղճ Սրբո, գու քո ետ յա-
շխա մեջ, եշին չոչ ասած կսս, վոր մարդասպան ել
գառար:

ՍԱԼԻԻ. Տնայերներ, թամամ բաբիւնն շինիք, ելողլին վոր
ես ամենը լսա, Չանդակներիդ կթքա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Վարժապետ, ետենց չե՛...

ՎԱՐԺ. Ել ետենց-մետենց չկա: Ապա մի լավ նայեցեք,
ձեր փեսացուն ձեր աչքի տուշ կոճի յե խաղում.
գուք գատեցեք խղճի մտնք, այդ յերեխան կարող ե
արդյոք 18 տարեկան աղջկան ամուսին լինել... Խեղճ
աղջիկ...

ՍՐՔՈ. Հիմա յել աղջկան խղճաց...

ՍԱԼԻԻ. Ինչ զգա խղճով մարթ ա ելել մեր վարժապետը...

ՎԱՐԺ. Այո. մայրիկ ջան, հենց այդ իմ խիղճն ե, վոր
ստիպում ե ինձ ախշափ տաք խոսել այս գործի մեջ:
Այդ միևնույն ե, վոր կանաչ արտը հնձես, կամ թե
չհասած, զեռ նոր կոկոնած ծիրանն ուտես, թե միրգ
ես ուտում:

ՍԱԼԻԻ. Տնաշենի վարժապետ, իմ յեքա չինար Մանուկին
տանում, անում ես չխասուկ ծիրանի թնայ: Բա վոր
գու դառել ես լիկուկ ծիրան, ինչ ան, ուզում ես
իմ աղին ել քո նման լիկուու...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Այ ջանրմ, հնչի՛ ետքան ջուր կծեծեք:
Վարժապետին զրկել են ըստեղ, վոր քորփա երե-
խանցը բան սովորցնի, իսկ իմ նման մարթից թող
ինքը բան սովորի: Ե՛, ե՛, ես հասակիս ենքան վար-
ժապետ եմ ճամփու դրել վոր...

ՍՐՔՈ. Վարժապետ, բանն ըսենց ա, իմալ տենում ենք,
գու մեր կյանքից ենքան ել բան չես հասկանում:
Մենք մեր բանը գինանք, են ել լավ: Բան ա, վոր
թոռս ուտում առնի, թող ըլնի հարիր տարեկան, նոր
պսակվի, ետ ել իրան բանն ան...

ՍԱԼԻԻ. Հալբաթ, վոր ետենց ա: Ուրեմն մենք գեղացի
անհիմար մարթիք ենք: Մեր յեքա մհալի մեջ մե եր-
կու հատ քոստ, մոստ շկոլ կա, կասես են բախտավոր
Աշտարակն ա, ուր 20 շուռա շկոլ կա, ել թագավորա-
կան, ել ծխական, ել սելսիո-խագեյնական. իմ գինա-
լով, ամեն գեղ պոի մե հատ շկոլ ունենա, վոր բա-
նից բան դուրս գա... Ես ել վորը գինա, չեք...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Սալբի, ետ ինչ ա, բլիբուլ ես դառել, ետ
ինչ ետ ա, մե քիչ ալուր քսա երեսիդ, թամամ քաղ-
կենի կըլնես. դե վոր մենք ամենքս ել ուտում առ-
նենք հո, բաս սի աշխարքին կկշտացնի: «Յես աղա,
գու աղա, բա մեր ազունն սի աղա»: Բու ա, ջանրմ,
բու ա դարգակ ջուր ձեծենք. նաղղի խոսանք: Ասեք
տենանք, սումն ուղարկենք աղջիկ ուղելու. վոնց վոր
գիտեք, աղջկան հազար ուզող ա գնացել, համա ան-
իրավ հերը—Այն ամենքին ել քարի յա գարկել...
Հընչի՛ չե, զինքը հարուստ կրակի տեր, աղջիկն ել
խորտա՛ կաքավի կտոր, աբուռով ու նամուսատեր...
Մաղ աշխարքն ընդրա գովքն ա անում... (Նեսու ե
մեկում ծառա ԽԱՉՈՒՆ, վորս վեադառնում ե դաւ-
սից—արսր վարելուց... արուի խոփը շղթան ուսին
զցած, խուրչինի պես):

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԽԱՉՈ

ԽԱՉՈ. Բարի աջողում ձեզ...

ՆՍՏՈՂՆԵՐ. Վայ աստծու խերն ու բարին քեզ...

ՍՐՔՈ. Հը, Խաչո ջան, արտը վարելուց պրծար, թե չե...

ԽԱՉՈ. (Խեղճացած, գլուխը փռելով): Աղա ամի ջան,
պրծնելը պրծա, համա են եշն ել գնաց արտի ողորին:

ՍԱԼԻԻ. (Տած ձայնով): Վայ, բու խաբարը քու գլուխն
ուտի, հա՛...

ՍՐՔՈ. (Սյւլայված): Այ տղա, մի աստ տեսնանք, վճնց
թե եչը արտի ողուրին գնաց...

ԽԱՉՈ. (Խեղուացած ձայնով): Տո աղա ամի ջան, հոտաղի
հեա, իրիկիա են հովին, են վախար, վոր Ալաղլազա
քամին անուշ, անուշ, շնգշնգալով փշուս էր, մենք էլ
խող ասելով՝ մեր վարն ինք անուս... էշն էլ մեզնից
մե քիչ հեռու, ծաղիկները մեջ, իրա խամար արու-
ծուս էր, թափալվում էր, քեֆ էր քաշում...

ՍՐՔՈ. (Բարկացած): Դե, շուտ, շուտ պատմի, ինչ ես
գլխիս ճառ կարգում:

ՎԱՐԺ. (Դիմում է Սեֆոյի): Այստեղ բարկանալու միան-
գամայն կարիք չկան, թող մտրղը խրոնոլոգիչեակի
ձեով պատմի, վորպեսզի կանոնավոր գաղափար կազ-
մենք եշի անհայտանալու մասին... (Դիմում է Խա-
չոյի): Հետո, հետո, ապա Խաչո, ապա...

ԽԱՉՈ. Հետո են ա, վոր վարժապետ ջան, մեկ էլ տե-
սանք, վոր եչը չկա... դես վագեցի, դեն վագեցի,
հասա Սալով աղբրի մոտի են ջնջ բարը...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ախր վճր քարն ե...

ԽԱՉՈ. Ե՛ն ծուռ բարը հան, ինչ վոր ասում են, տակը
խաղինա կա... են ա, են, պաի լավ մոտինի քարին...
աչքերս բաց անեմ, ինչ տեսամ, զուլում կրակ... էշս
փոսները փռե, աչքերն էլ չոե, գելն էլ իրա խամար
արխային նստե, բառբառելով ճաշակում ա... են ասու-
ծու խերն ու բարին ձեր գլխին, սեն ու սուղը Խա-
չոյի գլխին... անն ու զարգանդը կոխեց ինձի... Հա-
րաքլաթ արի, թոքն ու պլոճիկս հավաքեցի, միքանի
դան թուք կուլ տվի, թագադան աչքերս բացեմ, ինչ
տեսամ... մեկն հելավ խաղար... յերգնքի ասողերին
հաշիվ կա, գելերին էլ հաշիվ չկա. յես ասեմ խաղբր,
դու ասան խաղար... ասի, այ հայ, ես ինչ ես ա, յես
էլ շուտով եշի որին կընգնեմ... Դե գիբի Խաչո, վախ-
տով հառեչ ձրա... Մեկ էլ, ասաված կյանք տա չո-

բաններին, հավաքիս հասան, մե խաղար դան գուլա
քցին, մեկ էլ մոտեցանք, ինչ տեսանք... «Թե եշ
դրել ես, արի տար». գելի տիրոջ տունն ավիրվի, դու
մի ասա, եշին քցե քաշ, մեզի թողե մինակ խաշ:
ՍՐՔՈ. Վալլա լավ գլներ, իմ եշի տեղ գելն քեզի ուտեր,
Խաչո:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Դրուստ ա, հուրիշ յերգրներին՝ իշվանքից
չեք, իսկը Համադանա եշ էր, հաղար ձի արժեր...

ՎԱՐԺ. Այո, յես լավ գիտեմ, նա շատ պատվական եշ էր...

ՍՐՔՈ. Հալբաթ վոր, պատվով եշ էր, քահլան եշ էր.
Իլաքի ճամփա եթալու համար թառլան զուշ էր...

ԽԱՉՈ. Զախորդության տիրոջ տունն ավիրի... առավոտ
վար եթալուց, հըլա չխասած բերթի քարեր, մե բե-
գսղուր լապստրակի փոսներին տկեն թռավ... հլա լավ
էր, վոր ես փորձանքն եկավ եշի գլխին, բա վոր գար
վրը ոջախին:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Խաչոյի ասածը ողորթ ա, Սըբո ջան:
Փառք տուր ասածուն, վոր լապստրակի ձեռից եշով
պրծար... լապստրակից էլ անողուր բան վաչ թե աշ-
խարիս մեջ սեի չկա... որհնված աղվեսն ա, վոր տե-
սար թե չե, գնա գիտցի, վոր կնկանդ բերածը մախ-
ոուս տղա յա:

ՍԱԼԻԻ. (Դիմում է Սեֆոյի): Այ ջանրմ, բոլ ա, բոլ. խեղճ
իշի ճակատին էլ հալբաթ ետ էր գրուկ... բան չկա.
Մանուկս սաղ ըլնի, ամի Գիրքորի ասածի պես, ասեչ
տեսանք, վիճն զրգենք աղջկան ուզելու:

ՍՐՔՈ. Ամի ջան, ամի, հնչի, դու չես գիղի, վոր դինսրզի
հախից իմանսրղը կգա. յես ըտրա դեղն էլ գիտեմ,
մերը չմեռնի Սըբոյի. յես գիտեմ, Բաշոն վորտեղից
ջուր կխմա, յավաշ հալա մեր գլավին Գերբը ընդրա
տուսը վոր գնա, տես ետ բանը են սհաթը գլուխ
կգան, թե չե...

4036
1809
38820



ՍԱԼԻԻ. Մեղա քեզի, մեղա, վոր ըտենց ա, մենք մարդ
ու կնիկ մեկ տեղ պտի մեռնենք: Գլավին Քերորը
են ա, իմ լեզվի ծերին եր, պտի ասի, դու վրա բե-
րիբ...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Այ, ինչ եմ ասե, այ խելք, այ միտք—
զլավին Քերոր: Հալա մեկ ել ասա՝ զլավին Քերոր:
Քոսոտ Այոն վոր ընդրան ել մերժա, ասա, աշխարքը
պտի քանդվի ելի...

ՎԱՐԺ. (Հուզված): Ուրեմն ձեր զլավին ասածը ամենա-
զոր է, նա անհնարինը հնարավոր կգարձնի... ուրիշ
խոսքով, բանը թիակ կշինի... Ուրեմն Այոն նրա խաթ-
րին պատրաստ կլինի իրա աղջկան գոհելու:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Տո խելք (դիմում ե վարժապետին), զլա-
վին Քերորը վոչ թե մենակ բանը թիակ կշինի, այլ
ուրեմն, լեթե ուզենա, բանը գուլթան ել կշինի...
Գլավին Քերորը լայեղ անի, նրա տունը վտար գնի,
հա՛, վայ թե Այոն իրա աղին ել մատաղ անի... են
ել ուր մնաց, վոր, իմ գինալով՝ ախչիկը կա, թամա՛մ
թաց մայա յա, ախչկա հեղածն ի՛նչ ա...

ՍՐԳՈ. Հալբաթ վոր ետենց ա, ախչկա ոքուան ի՛նչ ա...

ՎԱՐԺ. Հետո՞... հետո՞...

ՍՐԳՈ. Տո վարժապետ ջան, ի՛նչ կխոսաս. պրիստավը վոր
պրիստավ ա, առանց զլավին-Քերորի վոտ չփոխա,
մարթի ուզենա հոքով մարմնով կկորցու. համա վոր
մաքին ել դնի, մարթասպանին ել չիստի կազատա...
ուր մնաց, վոր գիտնակ ել ա, իրա պրատակոնների
տակ ել շատ վախտ ոսկար ձեռ կքաշա...

ՍԱԼԻԻ. (Յածը ձայնով): Թա՛ռ, թա՛ռ, սաղ Կավկազ
զլավին Քերոփի թարիֆ կանա, հլա մեր խեղճ վաբ-
ժապետը գատ չգինա... Թող հալա մե հաջովի զլա-
վին Քերովը ընդրա տուն վոտ դնա, կտենաք, վոր
ուրախութունից ընդրա սիրտը կթոթու. հոգի ու-
նի, վոր մերժա՛, վորթեց վորթի կկորի...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Մերը մեռնի զլավին Քերոփի, նրա ասածը
հըլա թող գետին քցող ըլնի, կտենա, թե զլուխը
ի՛նչ ողբաթ կբերի. հավատա, վոր մի ենենց բան
կհնա, ի, վոր դիմացնի յերկու աչքը մի բնով հանի...

ՍԱԼԻԻ. Խելքիդ մեռնեմ, այ մարթ. են ա, լավ ես թիել:
Գնա զլավին աղաչանք-պաղատանը արա, գնաղեք
նշանը գրեք, թող մեր գավակին բախտավորացնենք,
նոր մեռնենք:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Ողորթ՛ ա, մարթա պտի երկաթը տաք-տաք
ծեծի, վոր ուզածի պես ծուա...

ՎԱՐԺ. Քիչ մնաց, վոր հասարակ գյուղական զլավուն
լերկինք հանեք:

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Հասարակը վոր զլավին Քերոփն ա, բա
միը յերգրի իշխանը վճրն ա, բա մեր յեքա ժողովրդ-
թի տերը ու սիրականը վճրն ա...

ՍՐԳՈ. (Ժպտալով, հանափի ձեով): Զննի՛ թե, վարժա-
պետ ջան, դու յես:

ՎԱՐԺ. (Կիսանեղանալով): Ասացեք, ասացեք, յես լուռ
եմ, այդ բոլորը հին ցավեր են: Յես կրկին ասում
եմ, չեմ նեղանում և չեմ ել նեղանա...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Ինչ հիս ցավ, ի՛նչ նոր ցավ, ախալեր ջան,
մեկ ել որս մեր գեղացի մեկը Յերևանից գալուց
դըհընի, իրա աչքով կտենա, ի՛նչ կտենա. են ամե-
նամեծ դիվանխանի մեջ, ես մեր զլավի Քերովը իրա
նաչառնկի հետ, թե-թեի տվուկ, բոլթա կտին, բոլ-
թա, ի՛նչ բոլթա, սապուկի ճոռոցը վայ թե հասնեք
Ստամբուլ... Խեղճ կրակ վարժապետ ջան, ի՛նչ ես
կորցրել, ին՛ի յետևից ես ընկել...

ՍԱԼԻԻ. (Քիթը յածկած, գուլխը շարժելով, ցածր ձայ-
նով, իրեն, իրեն ասում): Փառքիա մեռնեմ թանա-
պուր, դու յել դառար կերակուր... ես խեղճ կրակ
վարժապետն իրա հալով ել չի մնում, թաքավորի
նման մարթին ել չի հավանում:

ՎԱՐԺ. (Լսելով Սալբու ասածները): Ասացեք, ասացեք, յես այդ բոլորը կասենեմ... Քարի շրջանի մարդիք եք դուք:

ԱՄԻ ԳԻՐԲՈՐ. Այ, ողորմի քու հորը, ետենց ա, մենք քարքարու յերկրի մարթիք ենք, վարժապետ ջան: Մենք լավ դիտենք, վոր մեզանից չես նեղանա: Մենք իրար հետ աղ ու հաց ուտող մարթիք ենք, միան ուտենք, ոսկուր չենք բցի. ըտրա համար ել ինչ դուզն ա, են կասենք... (Փոքր ինչ լուսարյունից ետեմ): Ես անիրավը ուրիշ բան ա, գիտե՞ս...

ՎԱՐԺ. Ի՞նչ անիրավ:

ԱՄԻ ԳԻՐԲՈՐ. Գլավին Գերովը, դիտնակ ել ա, գինաս, շատ գիտնակ ա...

ՍՐԲՈ. Հայրաթ վոր, հմը ա մեր կավկազ ընդրա նման ուռուսավար խոսող են վախտ, վոր մեծավորների հետ ուտուսավար կշարթա, ինչ վոր կարկուտ խրուս... ոխան որ չուտես, չլսես, անգաճ անես. համա ինչ անեմ, դու բն, վոր զատ չեմ հասկանում: Գրլոխդ ինչ ցավցնեմ, ինչ վոր Արաբստանա ձին զանգուլամիշ անես, ջիլավն ել թողնես...

ՎԱՐԺ. Ախ, այդ բոլորը յես հասկանում եմ, լավ եմ հասկանում, սակայն վորից սիրտս կսկծում ե, հագիս ճովում:

ԱՄԻ ԳԻՐԲՈՐ. Ճովվելն ի՞նչ ա...

ՎԱՐԺ. Այսինքն՝ ցավում:

ԱՄԻ ԳԻՐԲՈՐ. Մազյար ընչի՞, դու ցավագյւճը ես... մարթի սիրտ ել ես թավուր քաղցր խոսքերից ցավ՞. վաղա, մենք ոխար ամիս ձմեռը ես թավուր բաներով ենք հայցնում...

ՍԱԼԲԻ. (Ցածու ձայնով դիմում է ամուսնուն): Այ ջանր՞, գյողը՞, հընչի յեք ետքան անտեղի շանա տալի ես վարժապետի հետ: Դրա ասածներն ինձ մոտ՝ կուկուն ածի, պուպուն տանի...

ՎԱՐԺ. (Գրգռված): Այ, այ, յես ձեզ վրա վոչ թե բարկանում, այլ ուղղակի ցավում եմ, վորովհետեւ ձեր տգիտությանն ու խավարամտությանը չափ ու սահման չկա...

ԱՄԻ ԳԻՐԲ. Հընչի՞ յես ըտենց զայլանում, վարժապետ ջան:

ՎԱՐԺ. Ինչպե՞ս չզայլանամ. քիչ մնաց, յերկինք հանեք մի գլավու, վորի խեղճը իրա ոգուտն ե, իսկ աչժմ ել իր փառամոլության համար շնորհիվ իր գիրքի՝ պիտի անբարխտացնե Մանուկին ու են խեղճ աղջկանը: Ուրիշ բան ե, յեթե ձեր գովաբանած գլավեն լինեք անկաշառ ե հասարակական շահերը պաշտպանող, ձեր լավ մարդկանցից մեկը, այլ բան, սակայն փաստերը այլ են ասում...

ԱՄԻ ԳԻՐԲ. Տա վարժապետ ջան, չեմ գինա, թե դու ետ ինչ կասես: Տո, դատավորը վոր գոռա կաշառակեր չինի, ինչ համ ու բազաթ ունի, գործ տեղից իրար կզն. խելք ա, յերգիր յոյա կել մա: Նոր դու եկել ես ամի Գիրքորին բան կսովորցուս, գլուխը չմեռնի ամի Գիրքորի... յես ել մի տարի քցոխվա հելա. համը իմացա, համա թող սաբաբի տ ունը քանդի, չթողեց զորանալի...

ՍՐԲՈ. Ա՛խ ջան, դե ասա տենանք, ինչ անենք:

ԱՄԻ ԳԻՐԲ. Ի՞նչ անենք. բոլ ա ալնի-ալնի խոսաք. վեր կաց, անսաս գնա, գլավիլի Գերովը ձեռը, վոտը պաչի, տար, դուշման քոսացրու, ետ բանը գլոխ բեր...

ՍՐԲՈ. (Դիմում է վարժապետին): Դու յեղ չե՞ս գա, վարժապետ ջան...

ՎԱՐԺ. Քավ լիցի:

ԱՄԻ ԳԻՐԲ. Քո բանն ա, քո աղա կամքը գինա, կուզես գնա, կուզես մի գնա: (Մեռն կամաց-կամաց պարսպանում է գնալ):

ՍԱԼԲԻ. Դեհ, բարի սնաթ հընի, դե գնա (Մեռն գնում է):

S T U T L 3.

ՆՈՒՅՆՔ, ԱՌԱՆՑ ՍՐՔՈՑԻ

ԱՍԻ ԳԻՐՔ. Վարժապետ ջան, գնանք ողեն, մե քիչ ել աշխարքի խեր ու շառից խոսանք: (Դուրս են գնում):

S T U T L 4.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍՐՔՈ

(Մեռն նանապարհի կեսից յես ե դառնում սուն):

ՍՐՔՈ. Հա, գորթ, Սալբի ջան, բան ա, թե ես բանը գլխի եկավ, մասսուս աթլաս դեյրես կհաքնես, նոր կգաս:

ՍԱԼԲԻ. Տո, ետ բանը թող գլուխ դա, աթլաս դեյրես ել կհաքնեմ, մարինես ել կքցեմ, հըլա սաղրի սոլերո ել կհաքնեմ: Բա մասխարությունն ա, տղա յեմ կարքում, ոչախ եմ սարքում...

ՍՐՔՈ. Դեհ, Սալբի ջան, սապոկներս ու մահուդ չուխես սուր: (Սալբին սապոկները պաշից իջեցնում ե յեվ գոգնոցով սրբում, սալխս ե մարդուն ու հագնվելիս ոգնում): Այ կնիկ ջան, յես գնացի...

ՎԱՐՍԿՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ազգկա հայր ԱԼՈՅԻ սուեր, մի կողմը, գեղեցիկ խալիչաներով զարդարված քախսին, ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒԸ բազմած, մի քանի բարձերի վրա. նրանից ցածր ՍՐՔՈՆ, նսած ե սարուեսկի վրա, իսկ ԱԼՈՆ՝ բավականին հեռու՝ հասակին փռած խալիչին: Նսած են ԱԼՄՍԱՍԸ յեվ ՏՊԱ ԲԱՐԹՈՆ. ՇՈՒՇԻԿԸ ամբողջ ժամանակ մտկոգին՝ գուխը կախ՝ կանգնած ե. դուան մոտ, փոք ինչ հեռու՝ պաշին հեռված ե ԳԼԱՎՈՒ ՅԱՍՎՈՒԼԸ, հրացանը ուսին:

S T U T L 1.

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒԸ, ՍՐՔՈ, ԱԼՈ, ԱԼՄԱՍ, ՇՈՒՇԻԿ, ԲԱՐԹՈ յԵՎ ՅԱՍՎՈՒԼ

ԱԼՈ. Հը՞, վոնց եք, լսով եք, գլավին աղա:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒԸ. Շնորհակալ եմ, լավ, համա դու արի տես, վոր զանգատավորի ձեռից աչք չեմ բացում:

ԱԼՈ. Բա, ժողովուրդ ա, ետենց կըլնի, բա ահագին մհալին կառավարելը հեշա բան գիտես, ինչ:

ՍՐՔՈ. Քերտի աղա, քո գարբն ա, վոր ժողովուրթ կկառավարես, գիտես:

ԱԼՈ. Հալբաթ վոր. Քերտի աղի զառքը չըլներ հա՛, աշխարհն իրար կուտելին, շունը տերը չեր ձանաչի:

ԲԱՐԹՈ. (Սուսելու ժամանակ կանգնած ե): Ամեն բան լավ ա: Յերկար կյանք հլնես, համա մեր ետ սարերն ել՝ թե ետ անիրավ քրդերի ձեռքից առար, են վախալը լազաթ կտա: Ել ուրիշ պակասությունն չունենք:

ՍՐՔՈ. Ճշմարիտ ա. ետ անիրավները սարերում մեզ շատ նեղություն են տալում:

ԿԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ. Տո, դուք քեզներդ քոք պահեք, թե մե
տպար տարի չեղ գլավին կընտրեք, մի քրդի փափախ
եղ չեք տեսնի մեր սարերում:

ՍՐՔՈ. Քո գլուխը սող ըլնի, ինչ ուզենաս, վոր չես անի:
Թորփախ յերանալ քո ձեռի մեջ, կոպերնատ քո
մարթ, դաթի ալեհնթ մակենթ, պրիստավ, մրիստավ
դիփ քոնն են ու կան:

ԱՂՈ. Հալբաթ վոր, իրա գլուխը թող սող ըլնի, մեղնից
անաղակաս ըլնի, մինչև Դաղստան, Արաքստան եղ եր-
թաս, ասես գլավին Քերոփի մարթն եմ, քեզի սուրբ-
սուրբ կանեն:

ԲԱՐԹՈ. Ճշմարիտ ա, ետենց ա. մեկեղ որս Գյոււմրուա
գայուց՝ Դողաթ գեղի մեջ մեռանք սրա նրա դուռը
ման գայուց՝ անուն մարթ մեզի ներս չառավ: Մեկ
եղ ձեզնից լավ չնի, են կողմից մի իշխան մարթ
դուրս եկավ, ասաց. տղերք ջան, վոքտեղացի չեք.
ասինք, գլավին Քերոփի յերկրից: Ախպեր ջան, ես
բանը վոր իմացան, մեզի հրամեցեք արին, տարան
իրանց ողեն: Ողան, ինչ ողան, մե սե ահագին վանք,
եղ ուտել, եղ խմել, եղ շայ, եղ ֆունջ, եղ չորդան,
եղ դոշակ, վոքն ասեմ:

ՍՐՔՈ. Յերկար կյանք հյնի. խոսքը մարդիս տերն ա,
ըտեղ են ասե. տերովին տերն ե կերե, անտերին
գելը:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ. (Ուռած ու փեկած): Գովասանք չնի,
ինչ Դաղստան, ինչ Արաքստան, ինձի ձանաչելը գնա
Ղազախ, Բորչալու թուրքերի մեջ:

ՍՐՔՈ. Ա, ողորմի հորդ, խոսքդ հալա մեկ շաքարով
կարա: Քերոփ աղա, մեկեղ տարին յես գնացի թուր-
քերի մեջ, պանիր առնելու: Ղաչաղ եմինի տղեն քե-
զի շատ սիրով և կարոտով բարե եր անում:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ. Հը, ինձի աշխարք կճանչնա, ինձի ա-

նուն հողը ծնած ինտան հլա չի մերժե, թե Ալուն
մերժի. աշխարքի մեջ խայտառակի, ետ չեմ գիտի:
ԱՂՈ. Վայ, չե, իմ կողմանե թող են մարթի տունը քանդ-
վի, ով վոր վոչ թե քեզ կմերժե, այլ խոսքիդ վրեն
խոսք կրերի. մենակ թե մարթի ձեռից դա:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ. Պարձանք չնի, ամենքդ եղ լավ դինտք,
վոր ինչտեղ բարեգործական խերով բան, ձեր գլա-
վին Քերոփն եղ ենտեղ: Այո յեղբայր, քեզնից պահեմ,
աստծուց ինչ պահեմ: Ես ա՛վուր որը, յես գանգա-
տավորներին թողել եմ անտեր, անտիրական, չեկեղ
եմ յերկու ծաղիկներու բախտավորութլուն համար.
քո ծաղիկ Շուշիկին ուզելու Սրքույի ջահեղ-Ղվան
Մանուկին:

ԱՂՈ. Վայ իմ գլխին, վայ իմ երեսին, իմ տուն տեղ քե-
զի փեշքեշ, իմ աղջիկն եղ քեզ դուրբան. թայնու,
թայնու, յես Ալուն եմ, յես ա խարքի մեջ բան կհաս-
կչնամ, մարդ կճանչնամ: Յես մեծավորի հետ նը-
տած, կանգնած մարթ եմ. յես իշխանավորի պա-
տիմն եղ գինամ, նոքարին ել: Տես, Քերոփ աղա,
անուն ինտան, վոր իրա տեղից իրար եկավ, յես
կհասկնամ, թե ինչի՞ համար ա, յա թե չե նրա
մտքին ինչ կա. հալա դունն չմտած, յես ձեր մտքի-
նը հասկացա: (Գիմում ե կնոջը): Ետենց չե, Բա-
րեյի աղջիկ: (Կինը գլխի շարժումով համաձայնե-
վում ե): Համա ետ բանի համար մի թեթե սովեթի
կանեմ պառավիս հետ, նոր ձեզ պատասխան կտամ:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒՑ. Ետ քո բանն ա, համա գիտես պապա-
կան առակը ինչ ե ասում. ինչ վոր ուզում ես անել,
սիֆթա կնգանդ հետ մասլահաթ արա. լսի, տես, թե
կնիկդ ինչ կասի, հակառակն արա, անպատճառ հա-
շող կլինի գործդ: (Գիմում ե Ալմասին): Ալմասս
քուլրիկ, ետենց ա: (Ալմասսը փոքր ծածկելով, քեթեվ
ժայտում ե: Ներս ե մեկում Մեկիսնը, մեռիին ծրար-
ներ):

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՒՅՆԻ ՅԵՎ ՄԵԼԻՏՈՆ

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Հը, ի՛նչ կա, Մելիտոն:

ՄԵԼԻՏՈՆ. Սկի, աղա ջան, յեքստրեննի թուղթ կա նա-
չալնիկիցը: (Տալիս է ծրարները):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Ես լավ ելավ, մենք Սրբոյի հետ կեր-
թանք ողեն, յես իմ յեքստրեննի փակեթները կկար-
գամ, տենամ, ի՛նչ կզրեն: Եզ ժամանակ դու մասլա-
հաթ արա քուլքիկ Ալմաստի հետ, խաբար արա,
մենք ողից կզանք:

ԱԼՈ. Ես լավ ասիր, զաթի ողեն սարք, խալիչեք փռած.
մաքուր, իսպահի, հրամեցեք, հրամեցեք (Քերորը,
Մելիտոնը յեվ Սրբոն գնում են):

Տ Ե Ս Ի Լ 3.

ԱԼՈ, ԱԼՄԱՍ, ԲԱՐԹՈ, ՇՈՒՇԻԿ

ԱԼՈ. Ե, Բարեյի աղջիկ, ասա տենանք, միտքա ի՛նչ ա,
իմ խելքով ես բանը զլուխ զալու բան ա:

ԱԼՄԱՍ. Վսնց թե գլուխ զալու բան ա, ես ի՛նչ ես ա-
սում, չեմ հասկանում: Առաջին, վոր տղեն մեկ մաս
թֆալ ա, իսկ քո աղջիկը 18 տարեկան, չուճքի կար-
կտի տարին է ծնվել. են ժամանակ, վոր ցորենի
խալվարը ելավ հարիր մանեթ: Մեկ էլ վոր, քանի-
քանի, լավ-լավ տղերք եկան ուղելու, հաղթե արիր,
իսկ հիմի միտք ունես, տաս Սրբոյի գրկանոցին, վոր
են ա, ժամի դուռը կոճի յե խաղում, վոր տասը
գառ համրել չգիտի. ինչ էլ ունեն, 20 հատ վոչխար.
2 կով, 2 լուծ յեզ, 2 լուծ գոմեշ: Ենքան էլ հա-
րուստ չի, վոր ասեմ, հարստի տղի յեմ տալիս:

ԱԼՈ. Ես յես լավ գիզեմ, համա, դու արի տես, վոր
գլավին Քերորի նման մարդը լայեղ է արել, վոր
գրել մեր տունը. դու չես գիզի, վոր ուզողի մեկ

յերեսն է ամոթ, չտվողի յերկու: Դու արի ու գլա-
վին Քերորի պես մարդուն դարդակ ճամբու գիր,
ի՛նչ, հեշտ բան ա, կամ մասխարութի՛ն ա:

ԲԱՐԹՈ. Ափոն ողորթ ա ասում, նրան գլավին Քերոփ
կասես. մերը չմեռնի, եքուց թշնամացավ, ենենց
թալաքի մեջ կբցի, վոր տուն տեղ ծախենք, տակից
չկարողանանք դուրս գանք:

ԱԼՄԱՍ. Բա, ալ վորդի, դուք կուղեք ձեր աղջկանը
կորցնեք: Դուք շատ լավ գիտեք, վոր աղջիկը ուրիշ
տղի վրա աչք ունի: Հլա եղ էլ մի կողմ դնենք,
ախար Սրբոյի տղեն հացին փափա յա ասում, թա-
նին էլ ֆուֆու:

ԱԼՈ. (Բարկացած): Դու հալա կնիկ ես, դուստ ա, մա-
գերդ յերկար են, համա խելքդ կարճ ա. յես քեզ
ախար բան ասացի. գլավին Քերորին չեմ կարա դար-
դակ հետ դարձնի: Մեկ էլ իրանք Մանուկենք
կարքին յոջախ են, զաթի Սրբոն էլ անվանի իշխան,
քանի, քանի տարի մարդը բյոխվաշութլուն ա արել,
եւ սահաթին էլ սուղյա յե: Զաթի, խոսքն էլ մար-
թի անունն ա:

ԲԱՐԹՈ. Ափոն ողորթ ա ասում, աղե ջան, դու գուր
տեղն ես ընկել աղջկանդ խելքին ու խոսքը ես կողմ,
են կողմ ծոռւմ: Ես էլ են տղին սիրում ա, ե,
քանի կոպեկ արժի են սերը: Սերս վճրն ա, բանս
վճրն ա, անոթի փորին ի՛նչ սեր, ի՛նչ բան: Հա,
դուստ ե, Մանուկը յերեխա յա, համա թե յերը
մեծացավ, մեր բոլորից էլ բոյով կլնի: Բոլ ա, բոլ,
թող խելքը զլուխը հավաքի, մանի Սրբոյի պալատի
նման տունը, իրա համար ուտի, խմի, գարկի, թափի...

ՇՈՒՇԻԿ. Ես ի՛նչ ա դու կասես, առնողը մագյար՞ յես
չեմ: Յես են յերեխին չեմ առնի, վոր չեմ առնի:

ԱԼՈ. (Բարկացած): Սուս, անամոթ, ես եր պակտս, մե-
ղա բեգի ասաված, ես որին էլ հասանք: Տո, անա-

մոթ, անդգամ, քու ելածն ինչ ա, վոր քու հոր գեմ
կխտաս: Դե, զե, մեկ էլ ձեռնա չարեմ, թե չե ձիւ
պոչից կախ կանեմ, կքցեմ քարերը: Հալա զու տես
աշխարհի բանն ե՞ Բա յես վե՛նց զավակ եյի, փո-
ղորմած հերս ասաց՝ ձեր մորն առ, յես էլ առա:
Պակաս մարթ ու կնիկ ելանք, պակաս ձեզ նման
երեխերը ունեցանք, հալա, ձեզ մի լավ թամաշա ա-
րեք: ասում եմ, լուսանդղի հերս ասեր՝ մեռիք, կմեռնի,
ասեր՝ ապրի, կապրի:

ՇՈՒՇԻԿ. Ափո ջան, յես իմանլ առնեմ են երեխին. ամեն
վախտ էլ քո խոսքերը սրբությամբ կատարել եմ,
համա ետ բանը չեմ կանա կատարի: Կմեռնեմ, ետ
բանը չեմ անի: Ձեմ անի, վոր չեմ անի... Ինչ ա-
սեմ, են որը սե ըլնեք, վոր չծնվի յես: (Ձեռները
վեր կաշկառած): Ախ աստված, զու մաղյար սե իր
զրել իմ ճակատին. կրակն ընկներ, երեք աղջկա ո-
րորոցը, յես էլ վառվելի, պրծնելի ես սե ու գառը
որերից: (Հեկեկում է):

ԱԼՄԱՍ. (Աղջկան փարարվելով, լալագին ու խեղդ-
վելով ասում է): Բան չկա, բալես, երած սրտիդ
համբերություն...

ԱԼՈ. Ա՛յ, վորտեղ են ասած՝ խելոք մարդ. զլավին Քե-
րոփը քիչ առաջ Յեղյա մարգարելի պես ասաց —
ինչ ուզում ես անել, սիֆթա կնկանդ հետ սովետ
արա, լավ լսի, տես, ինչ վոր նա կասի, դուն հակա-
ռակն արա, անխոս լավ կլինի: Հիմա յես էլ ետե՛նց
վճռեցի. վոր մեր ու աղջիկ մեռնեք, կոտորվեք, ետ
բանը պիտի գլուխ գա, քանի վոր իմ գլխին փափախ
կա, վոչ թե լաչաք: Ետ ձեր բանը չի: Դուք ձեր
դործին կացեք, իմացանք: (Բարձր ձայնով): Գլադա
Բարթն, գնա, համեցեք արա, թող գան: (Յեր գլա-
վին Քերոքը ներս է մտնում, Շուշիկը դուրս է
գնում):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒ. Թագազան՝ բարե ձեզ:
ԱԼՈ. Այ բարով, հազար բարով, համեցեք նստեք, բարձ
բերեք ետեղ. Շուշիկն ուր գնաց: Քերոք աղա,
ասա տեսնանք, թղթերիդ մեջ սկի ինչ կար...

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒ. Վողջություն, ամեն բան լավ է, նաչալ-
նիկը ինձի բարե ա արել ու յեքստրեննի կանչել ա:
ԱԼՈ. Ողորդ, Քերոքի աղա, քո արինն ինչքան քնոցք է.
Կավկազի մեջ էլ մեծավոր չմնաց, վոր քեզ չսիրեն
ու քու խոսքն էլ չլսեն:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՒ. Ինչպես տեսնում եք, մինչև որս թա-
քավորի պես ապրում եմ, ընդուր համար, վոր յես
ժողովրդի ցավը քաշում եմ, դրա համար էլ մեծա-
վորները հրա չտեսած, հատկանում են: Ա՛յ, յես ձեզ
մի բան ասեմ, հավատացեք, յես կյանքիս մեջ քիչ,
քիչ, մի հազարից ավել տղա յեմ պակել, են էլ ե-
նենց տեղեր, ենենց տեղեր, ենենց տեղեր, վոր իս-
կի գլուխ գալու բան չեր:

ԱԼՈ. Ըստեղ են ասել, կուժ, քեզ ասեմ, կուլա, դու հաս-
կա իր: Ներողություն, Քերոք աղա, ասածս առակի
համար, քո ասածի Ալանվերդին ինձ մոտ ա...

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒ. Հասկացող մարդը իսկույն կհասկանա:
Դե ասա, տեսամ, ասա: Մեկ եդ արողի շիշ Չիբեցդ
հան, որհնած արծվի կաթով բերաններս թրչենք, մե
լավ քեֆ քաշենք, աշխարուս մեռնել կա...

ԱԼՈ. Վոնց վոր յես ձեզ առաջուց ասացի, ելի ասում եմ,
վոր յես խոսքիս տեր մարդ եմ, ավելի շուտ կու-
ղեմ՝ իմ տունը քանդվի, քան թե քեզ նման իշխա-
նը իմ անից գարդակ դուրս գնա. մի աղջիկ չե՛,
քեզ դուրբան... համա ձեզնից ինչ պահեմ, պառավս,
մեկ էլ աղջիկս մի քիչ չեմ ու չում են անում, հա-
մա քանի գրոշ արժի:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Ե՛, խնամի Այժաստ, մոտ արի տենանք,
Բնչ ես սուքն առել, սեք նստել. Բնչ ես մեզի ես-
քան ցավեցնում, կրակի վրան ել պող ջուր լցնում.
մեկ տղա, մեկ աղջիկ չէ՛, բախտավոր ըլեն, մի բար-
ձի ծերանան, վասարամ...

ԱԼՄԱՍՏ. (Տխուր, սրտում, փրքը, բերանը ծածկած, ցածր
ձայնով): Աղա ջան, յես սրտանց ուրախ եմ, մեկ
աղջիկ չէ՛, քեզի զուրբան, բայց բանն ես, վոր տղեն—
Մանուկը շատ յերեխայ ա, Շուշիկս ել 18 տարե-
կան, թե չե, յես իմ մանը կուզեմ, քեզ նման իշխա-
նի խոսքի վրեն խոսք բերել չեմ ուզի...

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Այ հեր որհնած, վոր տղեն մի քանի
տարով փոքր յեղավ, աշխարք պտի քանդվի, իմ խել-
քով հլա լավ ա, գուք պտի ուրախ հլնիք, վոր աղ-
ջիկը թամամ խելքանաս ե, տղին իրա բոի սեջ կը-
պահի, ինչ թավուր ուզենա, են թավուր ել կմե-
ծացնի: Մեզսից շատ-շատերն են ետ թավուր պսակ-
վել. պակաս կաթն ու կորեկի պես կապրեն: Այ
ջանրմ, բան գինաք, բան ասացեք, թե չե ձեր ա-
սածների մեջ իսկի նյութ չկա: (Բարձր ձայնով Սրբ-
ոյին): Դեհ, մեկ արաղը հան, սիֆթա տուր խնա-
մուտ:

ՍՐԲՈ. (Արաղի շիբը հանելով գրպանից, բացում է յեվ
լցնելով՝ առաջարկում Ալոյին): Համեցեք, թագա
խնամի ջան, համեցեք: Առ, վախելա, ամեն բան լավ
կլինի: (Բաժակը բավական ժամանակ մնում է ան-
բարձ, մերթ ընդ մերթ կնոջ յերեսին նայելով, հետո
վերցնում է բաժակը՝ հուզված):

ԱԼՈ. Բարով եք յեկել, հազար բարի, մեր տուն-տեղ, հե-
լած-չեղած, ձեզի զուրբան: Շուշիկն ել ձեզի փեշ-
քեշ. խնամի Սրբո, աստված խեր տա, խերով բա-
զար ըլի: Բո սրբազան պարտքն է՝ իմ աղջկան վոչ
թե հարսի պես պահես, այլ աղջկանիցդ ել լավ Հա-

լա, մեկ մոր յերեսին նայեք, կասես Ալագազա
մթնած ամպ լինի: Եհ, բոլորտ ել վողջ լինեք: (Սր-
ժում է):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ և ՍՐԲՈ. Անուշ, անուշ...

ԱԼՈ. Հալա մեկ խնամաթաս ել լցրու, քուրիկ Ամաստին
տուր, թող նա ել վայելի: (Ալմասը հրաժարվում է
խմելուց, բայց յերկար սիպելուց հետո՝ ակամա
ճնորհավորում է գլխի շարժումով, բաժակը մոտեց-
նում է բերանին, առանց խմելու հետ է դնում սե-
ղանի վրա: Գլավին Քերոքը սիպում է, վոր լամի,
բայց Ալոն միջամտում է, ասելով, թե Ալմասը
խմիչք գործ չի անում. Մեռն բաժակը լցնում է յեվ
սալխ Գլավին Քերոքին):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Կենդանութուն, սաղ ըլեք. յես սիֆթա
շնորհակալութուն կհայանեմ խնամի Ալոյից ու
քույրիկ Ալմաստից, վոր իմ պատիվը, վնց վոր
հարկ ե, պահեց ն, դատարկ ձեռքով յետ չդարձրին,
զուշմանին չուրախացրին: Տանուտեր Սրբո, գու ել
սաղ ըլնես, քո աչքն ել թող յույս ըլնի: Յես խմում
եմ յերկու ծաղիկների կեսացը, փեսացու Մանուկի
և հարսն սցու Շուշիկի: Թող աստված նրանց ան-
թառամ պսակին արժանացնե, մեկ բարձի ծերանան:
Համով հոտով ըլին. հա, ուր ա հարսնացու Շուշիկը,
չկա՞, կանչեք, թող գա: Եհ, սաղ ըլնեք: (Կանծում է.
«անուշ», «անուշ» կոչում են բոլորը):

Տ Ե Ս Ի Լ 5.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՇՈՒՇԻԿ

ԱԼՈ. Ահա, աղջիկս յեկավ: Արի հայրիկիդ մոտ, բալիկ ջան:
(Փաթարվում է աղջկան): Հը՛, ծնողն ել իր զավակի
վատ ուզի: Իմացիր, վորթի, յես քեզ ենենց սեղ եմ
կամեցել, վոր մնալի մեջ անուն ունեն, մարթիք ո՛չախ
են, իրանց համար առանց մուննաթի կաշխատեն ու

կապրեն: Հլա դանից եկող մի տասը անոթի մարթու
ել կկշտացնեն: Ղորթ ա, Մանուկը մի քիչ պատիկ ա,
համա, լավ հոր մոր զավակ ա. եստեղ են առած՝
«աղեկ ձագն ի ձվին, աղեկ մանուկն որորոցին»:
(Կնոջը): Արի, կողակից ջան, արի, ինչ ես սուքն
առել, սերնառել. աստված վողորմած ա, դու դառեր-
մա բեր, պանիր բեր սուֆրի վրա, ամեն բան լավ
կլինի:

ՍՐՔՈ. (Շուշիկին): Արի մտաիկ, արի, իմ քաղցր հաբս-
նացուս. սաղ մնացինք, չմեռանք՝ կտեսնես. քեզ վննց
կպահեմ. ենքան վուկի նապալտն կախեմ վզիցդ, վոր
ճրատի պես լուս տաս, չուզողի աչքն ել քոռցուս.
(Աղջիկը հորից չի հեռանում):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՅ. (Յասավուլին): Այ աղա, մի ձեռաց եքս-
տրեննի մի զուռնա բեր, բլուլ փչոզն ել հետը. բան
ա, թե ուրիշին դամ անելիս կլինեն, ասա, Գլավին
Քերոքը կանչում ե: Հասկացար:

ՄԵԼԻՏՈՆ. Տո աղա ջան, չեմ իմանում ինձնից խամ ես,
ինչ ե. վորտեղից վոր ըլնի, պլետի տակ քաշելով
կբերեմ: (Իռուս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ՄԵԼԻՏՈՆ

ՍՐՔՈ. Խնամի Ալո ջան մի նեղութլուն քաշի, մեկ մարդ
զրկի մեր տուն, յա թե չե, մկա մերոնցից ձեր
թիպներին մարթ կլինի, խարար արա, թող գան:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՅ Յես պիտի ասելի, են ա, դու ասացիր:
Սուդյա Սրբո, վոնց վոր յերևում ե, յես ու դու մեկ-
տեղ պիտի մեռնենք, հա...

ՍՐՔՈ. Բախտավոր չեմ, վոր քեզ հետ մեռնեմ, սաղ աշ-
խարհը գիտի, վոր քո պատիվը են աշխարհուսմն ել
շատ կլինի:

ԱԼՈ. Աղա Բարթո, մի ձեռաց գնա, խնամիքին բեր:
ԲԱՐԹՈ. Ես սհաթին, Ափո ջան (գնում ե):

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՈՒՅՆՔ ԱՌԱՆՑ ԲԱՐԹՈՅ

ԱԼՈ. Դե, մատաղ ձեզի, դե կերեք, խմեք, քեֆ արեք
դուշմանի աչքը հանեք: Ի՞նչ եք վախենում, զինին
ու արաղը ծով ե: Դե լալլա, լալլա, յես ձեզի դուր-
բան, դուք ինձի վոչ...

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՅ. Սուդյա Սրբո, մե թութունդ տուր, տե-
համ, մե պապիրոս քաշենք:

ՍՐՔՈ. (Գրպանները նույնը լինելով ծխախոտի սուվր չգտնե-
լով) Վա՛յ, իմ աչքերը քոռնան, գլավին աղա ջան.
Թութունս մոռցա տանը: Եղ անտերը դուլում բան
ա քաշողի համար. առանց հացի մարթ յուր կեթա,
համա առանց թութունի մարթս թամամ կցնթի:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՅ. Թութուն չկա, չկա, հո յերգը կա: Այ,
ողորմի հորդ, մե քո են քաղցր ձենով թութունի յերգն
ասա, նրա զովքն արա, մինչի դուռնեն կգա:

ՍՐՔՈ. Աչքիս վրա, Քերոփ աղա: (Ոձիք բացելով յեվ
կոկորդը մտնելով, յեգում ե, ձեռքը համաչափ
շարժելով՝ ըստ յեղանակի սափսի: Գլավին Քերոքն
ու Ալոն անում են նույնը. ձայնակցելով Մեֆոլին.
«վա՛յ լրմե, վայ» կրկնակր յերգելիս):

«Սեր, արաբա դառնա կաճկա,
Քաֆուր թութուն ելավ պաշկա,
Քեզնից դոռբա ել բան չըկա,
Թարիֆդ անեմ, ազիզ թութուն,—
Վա՛յ, լրմե, վա՛յ:

Տրդերք գլրին խաս կարմիր ֆաս,
Իրար կասեն՝ նաֆասը սաս.
Իրվանխանեք միշտ ման կրգաս,
Նաշալնիկ ես դառե, թութուն,—
Վա՛յ, լրմե, վա՛յ:

Թե կըքաշեմ՝ սիրտ կխառնա,
Թե չեմ քաշի՝ որըս դառն ա.
Խեղճ Արթեհն իր ք չ կըբառնա,
Կերթա ձեռեղ գանգատ, թուփուն,—
Վայ, լըմե, վայ:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ և ԱԼՈ. (Հիացած բացակասելով են): Ա՛յ,
սաղ ոլ, ա՛յ, ձեռք անսպառ, սուղյա Սըբո: Հո խնամի
չես, հազարան բիլբուլ ես:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. (Վոգեվորված բարձրացնում է բաժա-
կը): Սուղյա, ալլահվերդին քեզ մոտ, ես թանգագին
կենացը խմում եմ քո թաղա խնամինների — լեղբայր
Ալոյի և քույր Արմաստի կենացը: Յերկուստ ել վողջ
լինեք, բարով, խերով ձեր Բարթոն ել ես որին ար-
ժանանա: Իհարկե, «աթ աթասունա չյաբյար. ողուլ
դայրսնա»: Բարթոն ել, կասես, հոր պնչից թուել ա.
Թող սաղ ըլի, իրա հոր ոջախից անպակաս րլի: Ինչ
ասել կուզի, աշխարհ ել գիտի, վոր Շուշիկը Ալագյաղա
անթառամ ծաղիկն ա, սիրունության, թե բնության
կողմից, մոր հետ ինչպես մի սանդրի կտավ ըլեն.
Թող ես թավուր մերը սրհնվի, վոր ետ տեսակ գա-
վակ ա մեծացրե, վոր մեր սաղ չերկրի փառքն ու
պարծանքն ա. ետ Ե պատճառը, վոր ուզողները իրար
ճար ու ճամբա չեղին տալիս, դոնից մանուկ՝ յեր-
թիկից գուրս գնում, յերթիկից մանուկ՝ դոնից լել-
նում: Ուրեմն, ձեր թանգագին կենացը: (Վոնձում է):

ՍՐՔՈ. Աղա ջան, աստված թող մեր ումբրից կարի, զնի
քո ումբրի վրա. եստեղ ե ասած.

«Ազամ վար, քի ազամլարըն նախշի դրը,
Ազամ վա, քի հեյվան ոնդան չախշի դըր»:

Ուզում եմ ասել, վոր դու մեր չերկրի ծաղիկն ես ...

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԱԶԱՆՎԱՐՆԵՐԸ

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Ահա սազանգարներն ել յեկան. բա սուր ե,
Սըբո, ձերոնք չկան...

ՍՐՔՈ. Ես ա, կգան...

ԱԼՈ. Ուստեք, համեցեք, նստեցեք: Համա Գերոբ աղա,
ինչ ուստեք են, թե բլուլի վրա յեն փչում, թե նա-
խնի:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Բաց դու արի տես, վոր յես բլուլը ավե-
լի յեմ սիրում: Եսենց ջիգար մղկտացնող բան չկա:
Իլլաքի սավղաբար մարդու համար:

ՍՐՔՈ. Բլուլի տունն ալիբի: Չուրի Ստամբուլ ել կփչեն:

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Մե բլուլդ սարբա, աչքերս ջուր կտրալի,
մե փոչխար՝ բաշա, տենանը: (Բաժակը սալիս է գուռ-
նաչուն): Մե առ, առ, առ, մե կատարդ տաքացրու, են
վախար յես գիտեմ, վոնց կփչես: (Նվագում են.
յերեմով անդադար խմում են, Շուշիկը սխուր,
գուլսը ծուած՝ նսած է մոր մոտ ու յեղա-
նակին հարմար ոտուում է գուլսը: Մի փչ աճց,
Մանուկը ներս է մտնում. մոր փեճից բռնած՝ սի
խանի կանանց հետ):

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՒՅՆՔ, ՍԱԼԵՆ, ՄԱՆՈՒԿԸ ՅԵՎ ԲԱՐԹՈՆ

ԱԼՈ. Վայ, բարով, հազար բարի, իմ աղա փեսա, իմ
քաղցր խնամիք, համեցեք, համեցեք, նստեցեք, (Ներս
մտնելուց բարեվում են բոլորին, Շուշիկը առանձին
դժվարությամբ բարեվում է սկեսուրին, վորը նրա
գեմն առնելով ափերի մեջ, առանձին-առանձին պա-
չում է քեբը: Շուշիկը Մանուկին չի բարեվում):

ԳԼԱՎ. ՔԵՐՈՒՑ. Առաջարկում եմ խմել Սալբու և Սըբուի
կենացը: (Իսկույն յեմ յեր խմում են, չկարողանա-

լով հասել շատ հարթած լինելուց: Արևիկը շատու-
նակում է նվազել մի շարք արեվելյան յեղանակ-
ներ: Ակետուրը ձեռքը Շուշիկի վզովը գցած՝ խոտում
է Ալմաստի հետ: Մանուկը ներս մտնելուն պես՝ վա-
զում, նստում է հոր գիրկը յեվ ապա տեղավորվույ
է Մեղյի ու Քերոբի մեջտեղը, ամբողջ ժամանակ
խաղում է Քերոբի խանջալի յեվ կոնակների հետ:
Մերում է Քերոբի մենդալը իր զգեստի փեշերով,
ապա մտնակը խելով յեստույից՝ մտնակում է յա-
ստույին յեվ գունակներին: Գլավին Քերոբը հար-
թած՝ առաջարկում է Մեղյի յեվ Ալոյի հետ «յայլի»
պահել, վորոնց միանում են բոլորը, բացի Շուշի-
կից: Մանուկն էլ մոր փեշից բռնած՝ վեր-վեր քրո-
չելով պտտում է):

ԳԼԹՎ. ՔԵՐՈԲ. (Հոգնած գոռում է. «Աստված շնորհա-
վոր անե»): Կամաց-կամաց՝ «մնաս բարով» անելով,
հեռանում են բոլորը):

Տ Ե Ս Ի Լ 10.

Ա.Ո. ԱՄՐԱՑՑ. ՇՈՒՇԻԿ. ԲԱՐՔՈ

(Փոքր պատուգայից հետո՝ Շուշիկը հանկարծ փրդն-
կում է):

ՇՈՒՇԻԿ. Ափո ջան, ափո, ծնածս սնաթից մինչև ետոր,
յես քո դեմ թամամ հարս եմ յեղել, բարձր ձեռով
չեմ խոսել, բայց ետոր պիտի խոսեմ: Ափո ջան, դու
ինձ սող-սող թաղում ես. թող սև ըլեր իմ ծնունդը,
ափո ջան, ափո (ուժեղացնում է լացը): յես լավ
հասած աղջիկ, իման ես տալիս ինձ են գրկանոցին,
են հափի ճուտին: Յես ուզում եմ կին լինել, ապրել,
վոչ թե գնալ Սրբոյենց տանը բոժ գառնալ, դարեա-
շութուն անել: Դու լավ գիտես, ես Յ տալի յե, են

աղեն ինձ վրա աչք ունի. մի հասակի ջահելներ ենք,
իրար հետ գառ ենք պահել, խաղացել, մեծացել...
Ախ, ինչ անեմ... (Հանգուր, հոնգուր լաց է լինում):

Ա.Ո. (Հարթած. հագիվ է իրեն պահում վոտերի վրա):
Սուս, լիրբ, անամոթ, մեկ էլ ետեց բաներ չսեմ,
թե չե, առանց խոսարու՝ կգուլլեմ: (Պառկում է
քախսին, շարունակելով մրմնջալ ֆեթի յերգը):

ՇՈՒՇԻԿ. (Խեղդվելով, բարձրաձայն հեկեկալով յեվ լա-
ցից փաթաթվելով մորը): Աղե ջան, աղե, վոչ բա-
րով, վոչ սարամաթով դու ծնիր ինձի, աշխարհ բե-
բիր: Իսկ դու, ափո, լավ իմացիր, վոր դանակը վոս-
կորիս հասավ, քո գյուլլելուց էլ չեմ փախենում: Ա-
փեյի շուտ՝ դուն իմ գրկակիս վրա կմղկտաս, քան թե
Մանուկի հարսանիքին կպարես (Բարձրաձայն հեկե-
կում է):

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Ի. Յ. Բ.

ՅԵՐՐԱՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պ Ա Տ Կ ԵՐ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Հեռվում քաղաքացի Արագածի կանաչ լանջերից մեկի վրա կանգնած է, առավոտյան մթնադի մեջ, հովիվը, այծեմների (յափնջին) կիսով ձգած ձախ ուսին, վոսնեի տակ պառկած գամբո շուկր: Հովիվը հեռվում ձեռքի մահակին՝ յերգում է.

«Աբարան բարձր տեղ ա, վա՛յ,
Ջուրը հիվանդին դեղ ա, վա՛յ,
Յես սիրեցի, վա՛յ, խախը տարավ
Իմ սիրած յարը,
Ախ, թե չառնեմ, վա՛յ, լես կմեռնեմ,
Իմ սիրած յարը»:

Տ Ե Ս Ի Լ 1.

ՏԻԳՐԱՆ ՅԵՎ ՎԱՐԴԱՆ

ՏԻԳՐԱՆ. Բա, ախպեր ջան, եսենց ել կրակ կլինի... երես բանից հետո իմ ապրիլը քանի՞ գրոշ արժի:

ՎԱՐԴԱՆ. Բա, ել ասում ե՛ս...

ՏԻԳՐԱՆ. Բա, ախպեր ջան, ես խի՞զճ ա. բա ես խաֆ... ուրը ցերեկով ինձի գյուլեցին, գրին դեն: Մարթիք, են ա, ուզում են զըվաթի դուռով Շուշիկին ձեռիցս թռցնեն, ելի...

ՎԱՐԴԱՆ. Այ ջանըմ, վոնց ել իրար գթել են, թե խո՞ճի, թե խախթաթի կողմից, կասեա մի սանդրի կտավ ընեն:

ՏԻԳՐԱՆ. Եստեղ են ասած. ես շունն ել են շենն, յերկունն ել մի սնեն. մարթիք թամամ կաթն ու կորեկ են: Ղուրբան քեզի, հլա ուր ես, հլա ենքան տներ քանդեն վեր...

ՎԱՐԴԱՆ. Գյուլա չեն բանդե, նոր պըտի քանդեն. ընչի չե, Գերորը սատանի փանջեվան, Սըքոն ել նրա յալանչին, մեկը զլավին, մյուսը սուդյա, ինչքան մատաղ ընի, ոսկոռը իրար հետ են կոծում:

ՏԻԳՐԱՆ. Վարդան ջան, ես բանը հլա մի լավ կշոա, են վախար կտեսնես, վոր թամամ ինձի գյուլախորով են արել, շուճի վոր, իմ է Շուշիկի իրար աչք գցելը մեր գյուղի միջի որորոցի յերեխեն ել գիտի:

ՎԱՐԴԱՆ. Տո, հոգուս մեռնիմ, հալբաթ վոր գիտես:

ՏԻԳՐԱՆ. Հեռու հարկից, հեռու սնից, հալա են, ե՛ն թիղ ու կես, գեանի մուսես Սըքոլին ե՛... Աշխարքի մեջ ինչքան սատանություն կա՝ սող նրա մոտ ա:

ՎԱՐԴԱՆ. Իրուս վոր է, ասում են, ո՞վ գիտի, գարունը հողաբաժնություն ընի, յա չընի՞ Համա, ենքան սատանա մարդ է, վոր ձուկը գլխիցն է բռնում, վոր ինչ ա, թագա հողաբաժնությանը իրա լավ-լավ հողերիցը չկտրեն, ուրիշին չտան: Ու իրա են գրկանոց Մանուկին մի կտոր հողի համար նշանեց: Մենք ենք խող-գլուխներս, վոր գարի հացին գաթա յենք ասում:

ՏԻԳՐԱՆ. Տո, այ ջանըմ, այ գրողըմ, բոլ ա. առ արևա կսիբես, թարգը տուր: Տո ընդունք վոր կան, հոգուց ու խո՞ճից գուրկ մարթիք են. (սախալամ) ընձի վոր դուռտար հարցուս, մարդ պաի ընդոնց երկուսի գլուխն ել կարի, աղը դնի, պըծավ, գնաց:

ՎԱՐԴԱՆ. Այ, ինչ եմ ասե, այ, հախ դիվան...

ՏԻԳՐԱՆ. Թե չե, ախպեր ջան, հողի լավը իրանց, ախչկա լաֆս իրանց, բա մենք ի՞նչացու յենք ես դուր աշխարհի մեջ:

ՎԱՐԳԱՆ. Դրուսա վոր է. համա, խկը մեր գեղի խաղ
կապող աշուղ Մեկքոնի առածն է ըլլելու, վոր ա-
սում էր.

«Մարդ կա կուսա, կիմա, հայ կանա.
Մարդ կա, դարդի ձեռքից վայ կանա.
Քանի, քանի տղամարդիկ վայ կանա—
Մեկ սեր սալսեն, մեկ աղիսուրջուն»:

Հիմա քոնն ա, ինձեն բեշբեթար, ինչ ունես, քո
սրախովանքն էլ ես աղջիկն է, են էլ ձեռքից հա-
նում են:

ՏԻԳՐԱՆ. (Կուսաղամ): Վարդան ջան, եզ, եզ, ինչ էս
ասում, առ, մազյար յես մեռել եմ, վոր եզ բանը
գլուխ դա: Տո յես էս աշխարհը քար ու քանդ կա-
նեմ. (աւամկեր կրճատելով) էս առամներով
Քերոբի են, են, բոկը կկրծեմ, արոււնը կիմեմ: Բոլ
ա, ախպեր, բոլ ա, մենք էլ մարդ ենք, մենք էլ հո-
ղածին ենք, մեզ էլ ասոված ա ստեղծել: (Վաճի
ձայն. կառնաց): Կա, չկա, էս եկողը Շուշիկն ա...

ՎԱՐԳԱՆ. Դե վոր եզպես ա, յես գնացի. ամեն բան Շու-
շիկին լավ հայն, թափն, վոր իրա խոսքին պինդ
կայնի, իսկ վոր բանը հասավ զոսին՝ թող Սրքոն ու
գլավին Քերոբը իմանան, վոր Վարդանը քամակիս
կայնուկ ա:

(Զգուշուրջամբ հեռանում է: Յեւզում է ՇՈՒՇԻԿԻ.
ուշիմ կեցով, չորս կողմը դիտելուց, ջրի սափարը գե-
սին դնելուց հետո, փառաբովում է Տիգրանին, գրկախառ-
նվում ու համբուրվում են):

Տ Ե Ս Ի Լ 2.

ՏԻԳՐԱՆ ՅԵՎ ՇՈՒՇԻԿ

ՏԻԳՐԱՆ. Հը, հերդ նշանիդ արողը խմեց, ելի:
ՇՈՒՇԻԿ. Ա՛խ, արողը խմեց, վոր ինձի էս ուրը գցեց...
Հայեց, մաշեց, երեց, խորովեց... (աւսամկելով): Ինչ

ասեմ, գլավին Քերոբ, բալետ կատողի, կարմիր գլուխ
ուստա գաս, էտ, էտ... մարգագելը վոր չլներ, էս
բանն էլ չեր ըլնի...

ՏԻԳՐԱՆ. (Անհամբեր): Տո, դահրուձարը խմեց, սե ցավը
խմեց: Դու են ասա, դու, դու ինչ ասիր. յա ինչ
արիր:

ՇՈՒՇԻԿ. Տո, դու հողը ասա իմ գլխին, ինչ ձեռքիցս
կգար, վոր ինչ անելի...

ՏԻԳՐԱՆ. Հեռո՞, հեռո՞...
ՇՈՒՇԻԿ. Հորս էլ ինչ ասես, վոր չասի:
ՏԻԳՐԱՆ. Ասն, ասն, ինչ ասիր:

ՇՈՒՇԻԿ. Ասի, վոր հագար գլավին Քերոբ մեռնի, եզ գըր-
կանոցին չեմ առնի, ու չեմ առնի, ափո՞, վոր մոր-
թես, փրթես, դնես խանչալի տակ զինա-դինա անես,
չեմ առնի, վոր չեմ առնի:

ՏԻԳՐԱՆ. (Մեղմուցում): Բա ինչ էս ասում, ինչ անենք:
ՇՈՒՇԻԿ. Խելք մնացել է գլուխս, վոր խելքակտոր բան
ասեմ:

ՏԻԳՐԱՆ. Շուշիկ ջան, էլ ուրիշ ճար ու ճամբա չկա,
փախչելուց սավալի...

ՇՈՒՇԻԿ. Փախչելուց...
ՏԻԳՐԱՆ. Փախչենք, գնանք հեռու, հեռու...
ՇՈՒՇԻԿ. (Ուրախ բռնած Տիգրանի ուսը): Փախչենք,
փախչենք, ինչ լավ ասացիր:

ՏԻԳՐԱՆ. Դեհ ջանս, շուտ արա, շուտ, քանի մարդ չկա
թուչենք: (Շուշիկը լուռ է: Մի քիչ հեռանալուց արա):
Դե շուտ արա, շուտ, ինչ էս քարացել... (Թեվիցը
խաշելով), գե հը՛, գնանք, միտք անելու վախտ էս
գլխի...

ՇՈՒՇԻԿ. Տիգրան ջան, Տիգրան, մի քիչ սաբը արա. ախր
ուր գնանք, ինչ անենք, վո՞նց փախչենք...
ՏԻԳՐԱՆ. Հըլա, հըլա... (զայբացում) ազիլ, խելքս թրոց-
րի՞ր, գե՛հ, հիրար արի, գեհ, շուտ արա...

ՇՈՒՇԻԿ. Ի՞նչ հիրար գամ, ի՞նչ անեմ:

ՏԻԳՐԱՆ. Չես գալիս, հա՛...

ՇՈՒՇԻԿ. Վախում եմ, ամոթ ա:

ՏԻԳՐԱՆ. Վախում ես, ամոթ ա՛, հընչի՛...

ՇՈՒՇԻԿ. (Տիգրանի ձեռքը ամուր բռնած): *Տիգրան, վախ
քերիս դուքան, իմա՞լ փախչեմ, իմա՞լ հորս ու մորս
նամուսը վտանակոխ անեմ, նրանց անեծքի տակն
ընկնեմ: Իմա՞լ վորդոց վորդի՛ հորս ոջախը խայտա-
ռակ անեմ:*

ՏԻԳՐԱՆ. (Վերին ասիճանի գազազած յեվ կասաղած):
*Հը՛մ, չես գալում հա՛... մագյար մեր բախտավորու-
թյունը հորդ ու մորդ նամուսին ես մատաղ անում,
կամ սրա, նրա-լավ վատ ասելուն ես բախշում: (Անա-
սելի գազազած յես է մղում Շուշիկին): Թո՛ղ թեա,
թո՛ղ, քեզ եմ ասում, թող, չեմ ուզում...*

ՇՈՒՇԻԿ. (Լացր ուժեղացնելով): *Ախր, քեզ վճնց թող-
նեմ, առանց քեզ վճնց ապրեմ:*

ՏԻԳՐԱՆ. (Ծայր ասիճանի կասաղած): *Վոչ թողնում
ես... վոչ փախչում ես, քանզվես աշխարհ, ավերվես
յերկիր... (Ուժգնությամբ ձեռքը ազատում է Շուշի-
կից յեվ անհայտանում):*

ՇՈՒՇԻԿ. (Փոքր ինչ լուռ մնալուց հետո, սարսափահար,
հեկեկալով) *Տիգրան ջան, Տիգրան, իմ ջան ու ջի-
զար. Տիգրան, Տիգրան, Տիգրան... (Չայնը յեվ լացը
ապեկսուր դարձնելով, բնկնում է յեռնի վրա. բա-
վականաչափ լուռքուն է սիրում: Այդ լուռքան պա-
հին լեռներից լավում են առավոտյան սավարն ու
վոյխարը դառն Բոս Գյուղացիների ձայներ, ինչպես
հո՛, հո... հեռի... սա՛... սա՛... սա՛... սա՛... սա՛... սա՛... սա՛...
հո՛... յեվ նման բացականչություններ: Ապա հեռ-
վից լավում է մեղամաղձոս ժողովրդական յերգը):*

*«Դըլե յաման, ուր կերիշկեմ,
մըժ ու դուժան,*

*քաֆուր ֆալագ, վոչ մի տեղից
ճար ու գյուժան, յաման, յաման...»:*

«Բյափուր ճալագ» խոսքը ցնցում, կարծես սրա-
փեցնում է Շուշիկին, վորը գլուխը բարձրացնելով, չո-
փում ու հուսաբեկ բացականչում է. «Վայ, գուլում ֆա-
լագ, վայ, լըմըն ֆալագ»:

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Բ

ՊԱՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Մեռյի տունը: Ամի Գիրգորը մեկ ձեռքին չիբուխ,
մյուս ձեռքը հակասին: Մեռն ձեռքեր խաչած՝ գրոսնում
է ջղայնացած, իսկ Սալբին անդադար ձեռքերը շփելով,
ախ ու վախ է անում:

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ, ՄՐԳՈ ՅԵՎ ՍԱԼԲԻ

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Որ ջոջութուն, խայտառակութուն. սան
ալլահ, չես կյանքուժա եսենց խայտառակ բան հըլս
չեցի տեսել:

ՄՐԳՈ. Վայ վավեր, վավեր. ես ի՞նչ հող եր, քաշի իմ
զլխին, ես ի՞նչ ոլին բերի իմ ջանին, մի կտոր հողի
համար. հե՛յ գիղի ապրուստ, վայ գուլում ապրուստ,
քո քաղցրությունն ասեմ, թե՛ քո դանությունը...

ԱՄԻ ԳԻՐԳՈՐ. Հեռի հարկից, առ, լիբը անամոթ քած, դու
սուգյա Սըբոյի հարսնացուն ըլնես, աքլորականչին,
են Աթամա մթանը, են վախտը, վոր չարն ու բարին
կոժում են, դու քեզի համար Ալագչազի ծաղիկների
մեջ են թոկից փախած Տիգրանի հետ պաշվես, քեֆ
անես, բառ ես բանը ասոված կվերցնի՛:

ՍԱԼԲԻ. (Մեկ ձեռքը ծոցը դրած. մյուս ձեռքը ձեռքին
շփելով): *Ախ, չեքանի սուտ ըլներ...*

ՄՐՔՈ. Բախտավոր, չորանի ասածը սո՛ւտ, բա են մեկել-
ներինը... հազր են ա, սաղ գեղը թնդում ա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ժամից յես եմ գայում, ողորմի աստված
դո՛ւ յես ասում. ինչ մեկ, հազար մարդ խոստովանա-
բար ինձ ասած կլինի ետ բանը:

ՄՐՔՈ. (Գրգռված դիմում է կնոջը): Բճա, ես ել քո
հավանած ու գովաբանած հարսնացուն: Գլուխս տա-
րել եյիր՝ հա՛ գովելով ու գովելով:

ՍԱԼԻԻ. (Նույնպես զայրացած): Տո, աստու բարեյա-
կան կրակը թափի Սալբու գլխին, վոր թափավ: Մե-
նակ Սալբին եր գովո՞ւմ, սաղ աշխարք եր գովում,
յերկինք հանում:

ՄՐՔՈ. Հնչի քո գլխին թափի՞, հազրը իմ գլխին թափի,
վոր թափավ, են ել վո՛նց թափավ: Սաբար մի կտոր
հողի՛ աշխարքի մեջ խաչտառակ յեղանք. ել սրանից
հետո մի հոսաղի հետ չես կարա խոսի:

ՍԱԼԻԻ. Գիդաս ի՛նչ, ա՛յ մարդ, ինձ վոր մնա, հենց ես
սնաթին վե կաց, գնա, մեր նշանը յեղ ուզա. ետենց
խաչտառակությունից յետո յես չեմ կանա Շուշիկի
պես անուն կտորած հարս իմ ո՞ջախը բերեմ: Սաղ
աշխարքը կըթքա մեր արուռին, մեր լեշին:

ՄՐՔՈ. Ողորթ ա՛ ետենց ա. Շուշիկը ճաքած կճուճ
ա, վոր ել շուր չի պահա: Իրա վտավ սիրեկանի
մոտ գնացողը, իրա ձեռքով ել նրա համար դուռ կը-
բանա... Ես թավուր խաչտառակությունից իմ ո՞ջախը
հավիտյան կմրոտվի, կապականվի... Այո՛չի աղջիկ
Շուշիկը մեր արտի սերմացու չե. եթամ նշանը յեղ
առնեմ, ես ամոթից ազատվեմ:

ՍԱԼԻԻ. Գնա, ա՛յ մարդ, գնա, ել հուշանալ մի: Ա՛խ, բախ-
տավոր չեյինք, վոր մեր հողը մի կտոր պակաս ըլներ,
ես խաչտառակությունն ել չլներ (զլուխը ցարժելով):

ՄՐՔՈ. Ախ, հողաբաժանությունը վոր չլներ, ես բանն ել
չեր հըլնի:

ՍԱԼԻԻ. Ախ, վարժապետ ջան, ետ իմա՛յ մարդ եր, գիա-
նակ եր, մարգարե եր, ի՛նչ եր. միտտ ա՛, հա՛, վոր
կասեր 18 տարեկան հասուկ աղջիկը 12 տարեկան
բյորփա յերեխին կնիկ չի ըլնի: Ընդրա համար ել մեր
աչքին փուշ եր դարձել:

ՄՐՔՈ. (Ա՛խ փառելով): Բա միտտ չե. խեղճ բյասիբը, վոր
բարով՝ նշանդեք յերթալու որը աղ կերավ, լեղի կե-
րավ, վոր ետ բանը քանդվի, համա գատ դուս չե-
կավ:

ՍԱԼԻԻ. Ախ, աստված մեր տունը քանդա, վոր քանդեց-
մենք վոր կանք՝ կուլիտ անհիմար, կողանի մարթիք
ենք. հեշտ, հանդիստ յերբ մարթի կլսենք, Ե՛ն ահա-
գին փթանոց գրքեր կարդացող մարթը, աշխարհի
չաքն ու բարին, սեն ու սիպտակը շոկող մարթը,
նստել եր, մեր հետ ախպոր պես՝ սրտացավանք բա-
ներ եր ասում. հալբաթ մարթի սիրտը վկայում եր,
վոր մեր գլխին ես ոչինը պիտի գա:

ՄՐՔՈ. Ողորթ ա, հողից ու բուսնչալարությունից գլուխ
չուներ, ենքան ել գատ չեր հասկանում, համա, քո
ասածի պես, ինչքան ել վոր չլնի, ուսումով եր. ես-
տեղ են ասած. «Տաշած քարը գետին չի մնա»: Դրուստ
վոր, ետենց ել յեղավ, են մարթի խոսքը գետին
չմնաց:

ՍԱԼԻԻ. Այ ողորմի հորդ, ելավ գնաց. պապանական առակն
ել ետ ա ասում: «Գիտունի հետ մարթ աղ ուտա, լեղի
ուտա, անգետի հետ մատաղ չուտա»: (Առանձին
կնեուրյամբ): Սրբո ջան, Սրբո, դու ըլնես Մանու-
կիտ աղիգ արևը, տունը մերը, խոսքը մերը, դրուստ
ասա, մենք ել, յանի ինսան ենք... յարբար, ի՛նչ գա-
նազանություն կա իմ և մեր կարմիր կովի մեջ...

ՄՐՔՈ. Յա ել չե, իմ ու մեր մարալ յեղան մեջ:

ՍԱԼԻԻ. Սուտ ա՛ վոր, հա՛...

ՄՐՔՈ. Հինչա՛ սութ. արթարություն վոր կհարցուս, ենենց

ա, ելի, են մարթի ասածը՝ ինչպես յեղը կաթեցու
մեղրի մեջ, Յեզը վոր յեզ ա, պտի իրան նման ընկեր
ընի, վոր հավասար լուծ երթան, թե չե, մենք մո-
զին ուզում ելինք լծել յեքս ջանավար յեզան հետ:

ՍԱԼԻԻ. Այ, ինչ եմ ասում, այ, արդարությունն էլ ես ա:
ՍՐՔՈ. Բա, ախպեր, ուսում... ուսումի մերը չմեռնի. ու-
սումը վոր կա՞ քար կծակա: Հլա տես, Սալբի ջան,
ընձի վերցունք, սհագին սուգյա մարդ, մեկ դարդակ
ձեռք քաշիլ ել չեմ գիդա, դրա համար էլ գործի մեջ
լակոտ-լուկուտի յեսիր եմ դառնում:

ՍԱԼԻԻ. Հալբաթ վոր, հիմա դու վոր ուսում առնելիր,
ո՞վ գիդի՞ ի՞նչ կըլնելիր:

ՍՐՔՈ. Սկի վոր չլնի, չնի, ուրյագնիկ էլ ա կլնի. համա
դու բեր, վոր եա անտեր ուսումը ենքան էլ հեշա
բան չե: Հաղարից մեկ մարդու գլուխ կմտնի... այ,
լավ միտս ա, ինչպես ետոր, յերեխա վախտս մեր տեր-
տերի մոտ մի ահագին ձմեռ կարդացի, համա անձախ
յերեք գիր գլուխս մտավ: Մեկ վոր «այբը», ինչպես
փոցխի գլուխ, մեկ «ն»), ինչպես պըպզած շունը, թվե-
րից էլ «7»-ը, վոր կասես իսկը պոչով գերանդու
պնչիցը թռած ընի:

ՍԱԼԻԻ. Տենում ես, յերեք գրով սուգյա դառար, բա վոր
մե տասը գիր էլ ավել գիտենալի՞ր:

ՍՐՔՈ. Ա՛, են ժամանակ թրիս երկու բերանն էլ կկտրեր.
վնչ, եստուց հետո նալլաթ ըլի չար սատանին, պիտի
շապիկս ծախեմ, անուն մեր տան մեջ գտնված յե-
րեխին են սհաթին տամ ուսումի: Մեկ էլ, վարժապե-
տի ըսածի պես, տղին են ժամանակ պիտի պսակել,
վոր պեխերը կմրի ու շուռ յեկած արաբեն էլ մեկ
ձեռքով կաջնացնի: (Բարկացած Ամի Գիրբուրի): Հը՛
ամի, են որը բլբուլ էլիր դառել, դե հիմա խոսա,
մի բան էլ դու ասա, թե չե, սրտներս պատուավ ե՞...

ԱՄԻ ԳԻՐԲ. Տո, եա ինչ ա, դուք կասեք, չեմ գիդի. դուք

վոր լավ մտածեք, կտենաք, վոր աշխարհի յերեսին
ինչքան սատանություն կա՞ սաղ ուսումնականների
տակն ա, ուսումով մարթի սատանությունն էլ ու-
սումով ա ըլնում, իմ ժամանակ որհնված ժամանակ
եր. ջրի գնալուց՝ յերբ մի կնիկ մի տղամարդու հետ
լեզու կթրջեր, տանուտերը եա թավուր կնոջ մար-
թին կբերեր, կքցեր ճիպոտի տակ, մի լավ կխաշեր,
վոր իրա կնկա գյամը քաշեր:

ՍՐՔՈ. (Բարկացած): Սուս յեղիր, ամի, սուս, սուս, դու
էլ ես հնացել ու ժանգոտել, քո ժամանակն էլ, քո
սովորություններն էլ. ճշմարիտ վոր խոսանք՝ ես բո-
լորի սաբաբը դու յես, վոր դու...

ԱՄԻ ԳԻՐԲ. Յե՞ս...

ՍՐՔՈ. Համա դու, հրամանքդ... դու մեր ցեղի քոթուկը...
նահապետը... հա՛ ասելով, ասելով, քո փթած հին
խրատներով մեր տունն էլ արիւր մի քոռ կապելի:

ԱՄԻ ԳԻՐԲ. (Չայրացած) Ախպեր, վոր ետենց ա, ձեր
գլուխը ձեր փորը. սրանից հետո ինչ կանաք՝ արեք,
յես ձեր վոչ խերին, վոչ էլ շառին կխառնվեմ, ընձի
կհասնի Յ արշին հող (Վերցնելով իր չիբուխը, պա-
րասվում է դուրս գնալու):

ՍՐՔՈ. Համա դրանից էլ լավը չկա, գնա ախպեր, գնա:
(Ամի Գիրբուր գնում է, խիս վիրավորված):

Տ Ե Ս Ի Լ 2.

ՍՐՔՈ ՅԵՎ, ՍԱԼԻԻ

ՍՐՔՈ. Ախ, Սալբի ջան, ես խայտառակությունից հետո
ենենց եմ կարոտացել մեր են վարժապետին, ենենց.
դրուստն ասած, վոչ թե սենակ նրան, այլ բոլոր ու-
սումնականներին:

ՍԱԼԻԻ. Հա՛, հա՛, ասա՛, ասա՛, իմ սրտի միջից ես խոսում.
հիմա, վոր են մեր վարժապետը ձեռքս ընկներ է՛,

Մանուկին ազիզ արեւը վիա, ամեն որ ձվաձեղ կկերց-
նեն: Նրա են փոստերը կլվանամ, ջուրը խմեն: Ականջը
կանչեր, ամեն որ կասէր, քանց թե Մանուկին պա-
կում էք, տվեք պատրաստեմ, տանք Եջմիածնի ջեր-
մարանը: Թարսի պես, սիրտս ել ենքան տխուր ա,
վոր լեզվով չեմ կանա սաի:

ՍԲՔՈ. Տո, տխրութունը դու ինձնից հարցրու (անտեր
անդադար չսկսիս խփելով). խանչալը վոր սիրտս
կոխես, հալա մի լավ ել խառնես՝ մեկ կաթիլ արյուն
չի գա:

Տ Ե Ս Ի Լ 3.

ՆՈՒՅԵՔ ՅԵՎ ԽԱԶՈ

ԽԱԶՈ. (Կամաց բացում ե դուր, ինուր ու խոսեցա
վոր): Աստված ձեր տունը քանդա, վոր քանդեց: Ձեր
հարսնացուն հոր սեզուով իրան զարկեց: Ասում են,
զարկելու քիմին՝ վոչ սվեց, վոչ առավ, մեկեն հո-
գին ավեց:

(Մեռն յեկ Սալբին անպասելի գուժից սարսափած,
խեղագարի նման իրար են նայում յեվ ապուռ կրում:
Փոք ինչ պառագա):

Տ Ե Ս Ի Լ 4.

ՆՈՒՅԵՔ ՅԵՎ ՄԱՆՈՒԿ

ՄԱՆՈՒԿ. (Հանկարծ աղմուկով յեվ լացով ներս ե վա-
գում, մի բուռը կոնիք առաջ շարեղով, վոսերը գետին
զարկելով. գոռում ե). Չեմ, ը՛. աղե ջան, աղե, ասս, ասս,
կարմիր կոճիքս ոգիցը ո՞վ ա գողացել, ո՞վ ա տարել...



ԳԻՆԸ 75 ԿՈՊ. (3 մ.)



Գ. ՏԱԳԱՏԵԼՅԱՆ

ԻՅ-ՅԱ ԿԼՈՇԿԱ ՅԵՄԼԻ

Գոսիզդատ ՀՍՀՐ Արմենի
Էրիվան 1931

«Ազգային գրադարան»



NL0369021

52677